

ՊԱՏՄԱՆԱԲԱՆԱԴԱՐԱՆԻ ԴԱՏԱՆ

ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՐԶՆԿԱՅՈՒՆ ՆՈՎՆԱԾՆԵՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ Ա. 1 ՆԱԽԱՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ

ԺԳ-ԺԴ. դարերի թաթուխապետ Կիրակոս Երզնկացու անդրիս երկերից է Նովհան-նեսի Ավերաբանի Ա. 1 համարին նվիրված մեկնողական ճառը, որում հեղինակը, համակողմանիորեն քննելով տարբերային վերոգրյալ տեղիքներ, պալիս է դրա մանրագրին բացատրությունը: Այն մեզ է հասել ձեռագիր երկը ընդօրինակությամբ, որոնք գրվել են ԺԴ. դարում¹: Այս ճառում եւս բացահայտվում են Կիրակոսի աստվածաբանական եւ փիլիսոփայական հայացքները, նյութի մեջ խորանալու եւ այն պարզաբանելու հմտությունը: Ճառն աչքի է ընկնում նաեւ իր գեղարվեստական արժանիքներով՝ լեզուն ավելի ճոխ է եւ հյութեղ:

Անկասկած ավերաբանական վերոգրյալ հարվածի մեկնության համար յուրաքանչյուր մեկնիչ վարդապետից պահանջվում էր Սուրբ Գրքի եւ հայրախոսական գրվածքների քաջիմացություն, ինչպես նաեւ համարձակություն՝ նման գործ ձեռնարկելու համար: Ահա Կիրակոս թաթուխին իր գրվածքում անդրադառնում է նման երկ գրելու դժվարություններին, իր հոգեվիճակին, հուզումներին եւ ապրումներին՝ շեշտելով, որ իրեն ուժ են պալիս «մեծ թաթուխապետը» եւ հոգևոր եղբայրների աղոթքները. «Եւ արդ, որոց ո՛չ յուսացայց կրից պարծականի ի ժպիքին ձեռնարկութեանց փոքու գմեծամեծսն կշռել, վասն այսորիկ հիացումն եւ ափշտիւն պաշարել գմիսս իմ, եւ դողումն եւ սասանումն՝ գմարմինս, եւ ընդ անասութեամբ փակեալ կափուցանել գրեւան իմ եւ զլեզուս ի քիմս իմ մարչեալ շխթայիւք պարսաւողէ՝ անշարժ եւ անբարբառ շրթամբք առկայացեալ: Տի-

1 Տե՛ս Մաշտոցի անվան Մաթենադարան (=ՄՄ) ձեռ. Ն^Պ 1098, 1320 թ., թ. 110ա-141բ, Ն^Պ 2178, 1391¹ թ., թ. 348ա-352ա, Երուսաղեմի մաթենադարան ձեռ. Ն^Պ 3674, ճառը նրբի, ԺԳ-ԺԴ. դար, ծառայ 17x13x9.5, էջը 962, միասին, բոլորգիր, 24 տող, էջ 716-728. ձեռագրերի ամբողջական նկարագրությունները տե՛ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մաթենադարանի», հ. Դ., կազմեց Օ. Եգանեան, խմբագրութեամբ՝ Փ. Անթաթեանի, Յ. Քէօսէանի, Ա. Ղազարոսեանի, Տ. Շահէ Քիյ. Նայրապետեանի, ցանկերը կազմեց՝ Վ. Դերիկեանը, Երևան, 2008, էջ 300, «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մաթենադարանի», հ. Ա., կազմեցին Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաթեան: Ներածությունը՝ Օ. Եգանյանի, խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մուսականյանի, Երևան, 1965, էջ 739, «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», հ. 11, կազմեց Նորայր արքեպս. Պողոսեան, Երուսաղեմ, 1991, էջ 95: Բնագիրն ամբողջությամբ պահպանվել է միայն առաջին ձեռագրում, որն ընդօրինակվել է հենց Կիրակոս թաթուխապետի կենդանության օրոք, մյուս ձեռագրում այն կիսաբ է: Նովհանաբար ձեռագրի գրչի ձեռքին եղել է ճառի անավարտ մի փայրերակ: Ցավոք ոչինչ չենք կարող ասել երուսաղեմյան ընդօրինակության մասին. Նորայր սրբազանի նկարագրությունից դժվար է եզրակացնել՝ ճառն ամբողջական է, թե՞ ոչ:

նա և ահագնաբնիկ և երկնահանգեպարեանս զարհուրեցուցանէ զիս, և աստուածաբնայ, և վսեմամիպ, կորովաբիր և հրաշեայ մեծ թաբունապետիդ րեսիլ զարմացուցանէ զիս, և զերադէպ և արփիաճեմ կաճառք սրբազան ծանաթից քոց պակուցումն և քսարմումն արկանէ ի վերայ իմ: Սակայն յուսացայց յայն, որ «տայ ամենայնի առաքապէս և ոչ նախարե» (Յակ. Ա. 5) և ի թաղցրութիւն բարերարութեան անարգամեծար մեծ թաբունապետիդ, և ի մաքրափայլ և ի սրբանուէր աղաթս զերապարիւ եղբարց և ձեռն ի կիր արկից այսմ իրադութեան՝ սաքար աւգնականութեան առեալ զնիզակակցութիւն աղաթից ձերոց, որպէս զի ոչ պարասեցայց դարապարտութեան, թէպէտ յոյժ վերջ յարժանաւորութենէն գրանիմ, զի և յայտոսիկ ոչ եթէ որ ոչ ըստ արժանաւորութեանն չափէ պարծի, այլ որ ոչն ախորժէ, դարապարտի»: Ինչպէս րեսնում ենք, Կիրակոս թաբունին վերոգրյալ մեջբերման մեջ և այլուր խոսում է ինչ-որ «թաբունապետի» մասին, շոյալ և առաքաձեռն մեծաբնում է նրան՝ անվանելով «աստուածաբնայ», «վսեմամիպ», «կորովաբիր և հրաշեայ մեծ թաբունապետ», «անարգամեծար», որի պարվերով էլ հավանաբար գրել է իր երկասիրությունը: Իսկ ճառի վերջում Կիրակոսը հավելում է. «Աջն աջադակ և բագուն ամենագար և լոյսն ճշմարիտ արեւնեցէ զարեւնիցդ մեր, զհայրդ հոգեւոր»: Բնականաբար հարց է ծագում՝ ո՞վ է ճառում հիշարակված թաբունապետը, որին դրվաբնում է ճառագիրը:

Կիրակոս Երզնկացու կյանքում երկու թաբունապետներ են նշանակալից դերակատարություն ունեցել: Առաջինը նրա ուսուցիչն է՝ Գլաձորի համալսարանի հիմնադիր Եսայի վրդ. Նչեցին (1260-1338), որի ձեռամբ էլ հավանաբար սրացել է վարդապետական գավազան և իշխանություն, իսկ մյուսը Նովհաննես թաբունապետն է, որի պարվերով նա մեկնել է Ս. Եւագր Պոնուրացու (Դ. դ.) երկու աշխարհությունները²:

Նայագիրտության անխոնջ մշակ Ղեւոնդ վրդ. Ալիշանը «Սիսական» աշխարհության մեջ հերկեյալ կարեւոր րեղեկությունն է մեջբերում Կիրակոսի ուսումնառության մասին. ոմն Ոսկան վարդապետ, 1304 թ. ընդօրինակելով մի Ավետարան «ի վանս Գլաձոր Ս. Սրեփանոսին», Եսայի Նչեցու աշակերպների թվում հիշարակում է նաև Կիրակոս Երզնկացուն³: Բացի այս րեղեկությունից, Մաշտոցյան Մարենադարանում պահվող և 1317 թվականին ընդօրինակված ձեռագիր մի Աստվածաշնչում, որի սրացողը և գրիչներից մեկը Կիրակոս Երզնկացին է, երկու հիշարակարաններ են պահպանվել, որոնցում գրիչը հիշում է Եսայի Նչեցի թաբունապետին. «Զամենամեղ ոգի՝ զԿիրակոս գրիչ և սրացող սուրբ կրակացս, և ծնադսն իմ և զերջանիկ թաբունապետս մեր, որ զօրինակս շնորհեաց, յիշել աղաչեմ⁴», իսկ Տիրացու գրչի հիշարակարանում ասվում է. «Զմեծ թաբունապետն զԵսայի և զհերկեղեկ լորին՝ զԿիրակոս վարդապետն,

2 Կիրակոս Երզնկացին Նովհաննես թաբունապետին 1354 թ. գրած Եւագրի «Նարիարաբքի» մեկնության մեջ անվանում է «ներիուն և հանճարեղ թաբունապետ», րեն ՄՄ ձեռ. Ն⁶ 1980, 1391 թ., թ. 41ա, իսկ նույն հեղինակի «Յաղագս Ը. խորհրդոցն» աշխարհության մեջ՝ «պարունիկ թաբունապետ», րեն ՄՄ ձեռ. Ն⁶ 228, 1457 թ., թ. 209բ. խնդրի մասին րեն Արմենուի Սրապեան, Կիրակոս Երզնկացի. բանասիրական ճշգրտումներ. «Բազմավեպ», 1993, էջ 188:

3 «Սիսական. Տեղագրություն Սիսեաց աշխարհի ի Ն. Ղեւոնդայ Ս. Ալիշան», Վենետիկ, 1893, էջ 134:

4 ՄՄ ձեռ. Ն⁶ 353, թ. 32բ:

ընդ նոցին և զմեղաւոր հողս՝ Տիրացու գրիչ, աղաչեմ յիշել ի Տէր⁵»։ Թե ինչքան է Կիրակոս Երզնկացին մնացել Գլաձորում և աշակերպել Եսայի բաբունապետին, հայրնի չէ։ Կիրակոսի այս ճառի համար մեր օգտագործած հիմք ձեռագիրը (ՄՄ ձեռ. Շ⁶⁰ 1098) ընդօրինակված է 1320 թվականին, երբ Կիրակոսը գուցե դեռ Գլաձորում էր։ Ի մի բերելով վերագրյալ փաստերը՝ կարծում ենք, որ Կիրակոսի հիշատակած բաբունապետը ոչ այլ ոք է, եթե ոչ նրա հոգևոր հայրը՝ Եսայի Նչեցի բաբունապետը։ Իսկ մեջբերման մեջ հիշատակված «գերապարի» եղբայրները հավանաբար իր դասընկեր վարդապետներն են, որ իրենց մշտամնա աղոթքներով գորավիզ են եղել Կիրակոսին։

Ճառի սկզբում Կիրակոս վարդապետը եւս մեկ անգամ հաստատում է աստվածային այն ճշմարտությունը, որ ամեն ինչ, այդ թվում նաև մարդ արարածը սրելով է և Աստված լողմից։ Բայց «աստվածաբան» դրախտից վարավելուց հետո մարդկային ցեղն ընկրության առաջ կանգնեց. մի մասը լայն և ընդարձակ ճանապարհն ընտրեց, իսկ մյուսը՝ նեղը և անձուկը։ Ի մերի ունենալով ավերարանական հատվածը՝ «Մարեք ընդ նեղ դուռն. քանի ընդարձակ է դուռն և համարձակ ճանապարհն, որ քանի ի կորուստ, և բազումք են որ մտնեն ընդ նա։ Քանի անձուկ է դուռն և նեղ ճանապարհն, որ քանի ի կեանս, և սակաւք են, որ գտնեն զնա» (Մարթ. Է. 13-14), Կիրակոսն այս տեսակի մեջ զանազանում է մարդկային չորս կերպեր և քայլիս դրանցից յուրաքանչյուրի բացատրությունը։ Ըստ նրա՝ առաջին տեսակը կամ կերպը «շնորհականն» է, որը հատուկ է մարգարեական և առաքելական շնորհի ունեցողներին։ Նմանաբան մարդիկ արարեցին աստվածապետ և անուս էին, բայց զարդարված էին Ս. Նոգու զանազան շնորհներով և լցված իմաստության աստվածային զանձերով, ինչպես որ մարգարեներն ու ձկնորս առաքյալներն էին։ Երկրորդ տեսակը «բնականն» է, որի մեջ են մտնում բնածին իմաստուն և հանճարեղ մարդիկ, ինչպես օրինակ՝ Նոյը, Աբրահամը, Նորը և ուրիշներ, «որք արեւն ոչ ունեւով՝ բնութամբ զարինացն գործեցին»։ Երրորդ տեսակը «վարժականն» է։ Այս մարդիկ ուսման և իմացության միջոցով նպատակադիր են հասնելու «վարդապետական» աստիճանին՝ կարարյալ գիտությանը։ Եւ վերջապես վերջին տեսակը «վարդապետականն» է։ Վերջիններս գործնական քայլերի միջոցով հասնում են տեսական գիտությանը, «զի գործ տեսութեան ասպնջական է, քանզի կարարումն արդիւնակաւացն սէր է, և զիտնականացն՝ խորհուրդք աստուածաճառք, և սկիզբն երկոցունց՝ հաւաքք և բնաբոյս գիտութիւն»։

Այս ամենը ներկայացնելուց հետո Կիրակոս Երզնկացին որոշ ինքնակենսագրական տեղեկություններ է հայտնում, որոնք պետք է ընկալել քրիստոնեական առաքելությունների՝ խոնարհության և հեգության լույսի ներքո։ «Իսկ ես թափուր և ունայն գոյով յամենայնէ, զի ոչ ընկալայ շնորհս յԱստուծոյ որպէս գումպար խմբից առաջին սրբոցն, որք յորովայնէ մաքրեցան քաճար Աստուծոյ և բնակարան Նոգոյն Սրբոյ, և ոչ վարդապետական հանճարոյ արժանացայ յաղագս ոչ գոյով բնական իմաստութեան և փոքրաբար ունեւոյ զանաթս մտացս բնութեան, և զի ոչ տրեւեցայ յոյով ժամանակս ի

5 Ամր., թ. 310ա։

դրունս իմաստնոց՝ կրթելով ի վարժս մակացութեան, և ոչ զաստիճանային մարեանսն անընթ[ի]սար ի վերայ բազկաց կրեցի, և ոչ եռանդնաշարժ սիրով փափաքմամբ կորզեցի զսպինս հոգիքնկալ վարդապետաց, որով աճեցեալ ի չափ հասակի կարարմանն ժամանէի, այլ վարկաբարակի և գործ առ գործով եղէ առ այստսիկ, քանզի բազում զգուշութեան և սրելալ արթնութեան պէտք են այնոցիկ, որք աստիճանոց և Սրբազանից Կրթակարանացն ձեռնարկեն ուսման և փեսութեան, խոհական մտաց և զարեղ բանի, այլև վարուց մաքրագունից, որպէս զի մի՛ պայծառագոյն փեսութիւն իմաստիցն ի նսեմ և աղջամուղջ աղքատիմաց մտացն ընդ անփեսութեան գրուանաւ ծածկեացի, և աղաւաղեալ մեծաբոսութիւն քաջաբոսութեան գերապայծառն բանից ի կշիռ զարութեան անիմաստնայրից չափեցի, քանզի և ոչ յայտսիկ ձեռնարկաւոցն յանդգնութեամբ և յովմիք ի հասմանէ գերակաբարն անկեալ ի վայր իմաստից փեսութենէ արձակիլ գիտնմ անպարիթ, քանզի որք միանգամ իմաստասիրութեանն փեսեան բանի, նախ ընթոն և պարշաճ է զակն հոգւոյն մաքրութիւն լինել յամենայն ախարատր իմաստից, և անբիծ և անարար վարս բերել յանձին, և առ այստսիկ ունել ամբողջ և անարար գերիս անձնաւորական զարութիւնսն հանդերձ նոցին գործարանաբն, այսինքն է՝ զփեսաւորականն, զգաւարաւորականն և զյիշաւորականն»,- գրում է Կիրակոս վարդապետը: Վերագրյալ մեջբերման մեջ Կիրակոսը մի շարք կարևոր կենսագրական փաստ է արձանագրում, որ նա այս ճառը գրելիս հասնում էր «ի չափ հասակի կարարմանն», այսինքն՝ երեսուն տարեկան էր դառնում: Մի փարիք, երբ միջնադարում եկեղեցականները ստանում էին վարդապետական աստիճան: Ուշագրաւ է, որ 1305 թվականին գրված ձեռագիր հնագոյն երկու «Շարակնոց» ժողովածուի մեջ, որտեղ գրեւորված է Ս. Աստվածածնի Վերափոխմանը նվիրված Կիրակոսի «Արեւելք գերարփին» շարականը, նա արդեն վարդապետ է անվանվում, շարականի վերջին տունն էլ կապում է «Կիրակոս վարդապետ» ծայրակալը⁶: Ուստի կարող ենք ենթադրել, որ մեղկնողական այս ճառը գրվել է շուրջ 1305 թվականին, երբ նա ուսանում էր Գլաճորի նշանավոր համալսարանում Եսայի րաբունապետի առաջնորդության ներքո: Այս թվականից էլ կարելի է եզրակացնել, որ Կիրակոս Երզնկացին ծնվել է շուրջ 1275 թվականին:

Նախքան բուն մեկնության անցնելը, ճառագիրը հարկ է համարում՝ ներկայացնել ուղղափառ հավաքի իր դավանությունը՝ քաղվածաբար մեջբերելով Ս. Գրիգոր Նարեկացուն (Ժ-ԺԱ. դդ.) վերագրվող «Բան խրատու վասն ուղիղ հաւատոյ և մաքրութեան առաքինութեան» գրվածքից մի հատված⁷: Մեջբերված հատվածն առավելաբար անդրադառնում է Ս. Երրորդության առանձնավորական հարկություններին, և Կիրակոս րաբունապետը Նայոց եկեղեցու վարդապետության փեսանկյունից մեկնաբանում է դրանք: Այսպես՝ Նայր Աստված բնորոշվում է իբրեւ «անսկիզբ, անծին, անպարճառ

6 Տե՛ս Վիեննայի Մխթ. մատ. ձեռ. № 212, 1305 թ., թ. 324ր. տե՛ս «Յուցակ հայերէն ձեռագրաց մարենադարանին Մխթարեանց ի Վիեննա», կազմեց Ն. Յակոբովս Վ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 535, Երուսաղեմի մարենադարան, ձեռ. № 1575 (1305 թ.), էջ 697. տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», Խ. Ե., կազմեց Նորայր եպ. Պողարեան, Երուսաղեմ, 1971, էջ 355:

7 Տե՛ս «Մարենագիրք հայոց», ԺԲ. հատոր, Ժ. դար, Գրիգոր Նարեկացի, Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 1024-1026:

և ծնադ, և պարծառ, և յառաջաբերադ, ճշմարիտ էութիւն, գոյ կապարեալ, անեղ, անժամանակ, անիմանալի, անսրեսանելի, անճառելի, անհաս, պարզ, անգնիւն, անկէտ, անսահման, աներբ, անուր, անբովանդակելի, անայլայլելի, անփոփոխ, գերաբուն, գերագոյ, գերալոյս, գերանճառ», Որդի Աստուծո՛ւ «կերպարան և ճառագայթ, էութեան նկարագիր, կնիք կենդանի, իմաստութիւն և զարթոյթիւն, Նաւ սահման և բան... Աստուծո՛ւ յԱստուծոյ, Անեղ յԱնեղէ, Անժամանակ յԱնժամանակականէ, Կեանք ի Կենաց, Լոյս ի Լուսոյ», Սուրբ Տոգի Աստուծո՛ւ էլ՝ «անծնելաբար բոլորումն ի Նաւէ... Էակից Նաւ և փառակից Որդոյն»: Անդրադառնալով Ս. Երրորդութեան Անձերի հարկութիւններին՝ Կիրակոսն օգտագործում է աստուծաբանական երեք կարեւոր եզրեր՝ *ծնողություն, ծնելություն* և *կողություն*՝ հավելելով. «Զի ոչ երբէք Նայր՝ ծնունդ կամ երազութիւն, և ոչ Որդի՝ ծնադ և կամ երումն, և ոչ Տոգի՝ ծնունդ և կամ ծնադ: Այլ միշտ պարզաճի ծնադութիւնն Նաւ, և ծնելութիւնն Որդոյ, և երազութիւնն Տոգոյ, զի որպէս առանձնաւորութիւնքն անփոփոխելի, այսպէս և յարկութիւնքն»⁸:

Կիրակոս րաբունապետը իր այս գրվածքում անդրադառնում է նաև «սկիզբ» հասկացության փառքեր կողմերին՝ օրինակներով ապացուցելով իր մտածումները: Իբրև աստուծաբան՝ նա վերագրյալ եզրի մեջ զանազանում է պարծառական և արարչական սկիզբները. պարծառական՝ «որպէս Նայր Որդոյ ծնունդան և Տոգոյն բխման»⁹, և արարչական՝ նկարի ունեւալով Մովսէս մարգարէի շարադրած արարչագործության պարմությունը: Ամենագոր Աստուծո՛ւ կամքով արարչագործության սկիզբը ժամանակից վեր է¹⁰: Արարչագործության միջոցով է մարդ ճանաչում Աստուծոն և հասնում փափագելի աստվածգիտությանը: Կիրակոսը, շարունակելով Արևելաքրիստոնեական Եկեղեցում արդեն իսկ ձևավորված մեկնաբանական ավանդույթը, ընդգծում է, որ Աստուծո՛ւ ստեղծել է այս աշխարհը՝ իբրև «տեղի ուսման և դաստիարակութեան»¹¹: Նա հետագա իր շարադրանքում սուրբգրային այդ տեղիի մյուս մեկնիչների նման խոսում է Բան Աստուծո՛ւ՝ Տոգը և Սուրբ Տոգուն արարչակից լինելու մասին:

Կիրակոս վրդ. Երզնկացին իր այս մեկնողական ճառը գրելիս օգտվել է հայրաբանական, քերականագիտական աշխատություններից և «Շարակնոց» ժողովածուից¹²: Բնականաբար նման երկի հիմնական աղբյուրը Սուրբ Գիրքն է, որից կապարված բազում մեջբերումները ևս մեկ անգամ ցույց են տալիս Կիրակոսի քաջիմացությունն Աստուծո՛ւ խոսքին: Ճառագիրը հականե հանվանե հիշում է Փիլոն Եբրայեցուն (ն. -Ք. 25-թ. հ. 50),

8 Տե՛ս **Տիգրան սարկավազ Բաղումյան**, Կիրակոս վարդապետ Երզնկացու ճԹ. սաղմոսի մեկնությունը. «Էջմիածին», 2011, Գ., էջ 107-108, **Նակոբ Բյոսեյան**, Դավազներ հայ միջնադարյան արվեստի աստվածաբանության, Ս. Էջմիածին, 1995, էջ 187-189:

9 Նմմ. **Սուրբ Տովհան Որոտնեցի**, Մեկնողական-իմաստասիրական ճառեր, Ս. Էջմիածին, 2009, էջ 53: Կիրակոս Երզնկացու և Տովհան Որոտնեցու ավերարանական նույն համարին նվիրված մեկնողական ճառերում իմաստային և երբեմն բառային նմանություններ կան: Նավանաբար Որոտնեցին ձեռքի տակ է ունեցել Կիրակոսի այս մեկնությունը:

10 Նմմ. **Կառլեն Միրոնյան**, Անանիա Շիրակացի, Երևան, 1998, էջ 68, **Յակոբ արք. Գլնճեան**, Նաւարի և բանականութեան հետքերով, Մոսկովիդէո-Ուրուգվայ, 2003, էջ 160-161:

11 Նմմ. «Սրբոյ իօրն մերոյ Գրիգորի Լուսատրչի Յաճախապարտում ճառը և աղօթք», Վենետիկ, 1838, էջ 57, **Նակոբ Բյոսեյան**, նշվ. աշխ., էջ 172-173:

12 Տե՛ս «Մարենագիրք Նայոց», Ը. հայտն., Շարական (=Շարական), Անթիլիաս-Լիբանան, 2007:

ոմն «մեծն Գրիգորիոսի» եւ Դավիթ Բերականին (Ե-Զ. դդ.)¹³, որին անվանում է «եռամեծն Դավիթ»: Բացի վերջինիս բերականագիրական աշխատությունից, նա օգտվել է նաև Երզնկայի դպրոցի բաբունապետ Նովհաննես Երզնկացու († 1293) նմանաբնույթ աշխատությունից¹⁴: Երկուսն բառացի մի հարված է մեջբերված նաև Ս. Բարսեղ Կեսարացու (329-379) «Վեցօրեայք» աշխատությունից¹⁵, ինչպես նաև մի ամբողջական հարված՝ Ս. Գրիգոր Նարեկացուն վերագրվող «Ժրարից»¹⁶: Մեր հայտնաբերած բոլոր աղբյուրների տեղիները նշել ենք բնագրի տողադասերով:

* * *

Բնագրի պարբերական ժամանակ վերականգնել ենք բառավերջի չգրված յերր, -ի ավարտով բառերի սեռական-տեսականի ւերր (հոգոյ=հոգոյ), զանց ենք առել ըերի (անըսկիզբն), բառավերջի յերի անտեղի գործածությունները (նոթայ) եւ բառամիջի անհարկի չգոյությունը (զգաարան=զգայարան): Պահել ենք Ա. ձեռագրին բնորոշ բառամիջի յ-ի անհարկի գոյությունը (զառայրահոս), իսկ տողադասվում տրվել Բ. ձեռագրի տարբերությունը՝ ձեռագրական պատկերը ճշգրիտ ցույց տալու համար: Գրչագրում առկա աւ-ի եւ օ-ի զուգահեռ գործածություններից նախընտրությունը տրվել ենք աւ տարբերակին: Բացել ենք բոլոր սուրբգրային տեղիները: Տեղումնական անունները եւ նրանց փոխարինող դերանունները եւ բառերը ներկայացրել ենք մեծատառով՝ առավել հստակ եւ ճշգրիտ դարձնելու համար նախադասությունների իմաստները: Անհրաժեշտության դեպքում մեր կատարած հավելումներն առնված են անկյունավոր փակագծերի մեջ՝ []:

Բնագիրը պարբերական օգտագործել ենք հետևյալ նշաններով՝] (փոխ.), > (=չիք), ~ (=չըք), + (=ավելացված է)¹⁷, որը հրատարակվում է առաջին անգամ: Մտորել տալիս ենք ձեռագրերի նկարագրությունները:

Ա-ՄՄ ձեռ. Ն^{որ} 1098, 1320 թ., ժողովածոյ, թ. 110ա-141բ, գրիչ՝ Ասիլ, Մխիթար, թերթ՝ 424, թուղթ՝ 16,5x12,3, գրութիւն՝ միասյուն, գիր՝ բոլորգիր, տող՝ 22:

Բ-ՄՄ ձեռ. Ն^{որ} 2178, 1391^ր թ., ժողովածու, թ. 348ա-352ա, վայր՝ Տաթև, գրիչ, սպացող՝ Յակոբ Ըղբւրոցի, թերթ՝ 395, թուղթ՝ 16,6x14, գրութիւն՝ միասյուն, գիր՝ բոլորգիր, տող՝ 28:

ԶԱՔԱՐԻԱ ԱԲԵՂԱ ԲԱՂՈՒՄՅԱՆ

13 Տե՛ս «Մատենագիրք Նայոց», Ե. հատոր, Է. դար, Անթիլիաս-Լիբանան, 2005:

14 Տե՛ս **Յովհաննէս Երզնկացի**, Նաաթումն մեկնութեան քերականի, աշխատասիրութեամբ՝ Լ. Գ. Խաչերեանի, Լոս Անջելոս, 1983 (=**Յովհաննէս Երզնկացի**):

15 Նմմաբ. **Բարսեղ Կեսարացի**, Յաղագս վեցարեայ արարչութեան, աշխատասիրությամբ Կիմ Մուրադյանի, Երևան, 1984 (=**Բարսեղ Կեսարացի**), երկի մասին տե՛ս **Կ. Մուրադյան**, Բարսեղ Կեսարացին եւ նրա «Վեցօրեան» հայ մատենագրության մեջ, Երևան, 1976:

16 Տե՛ս «Մատենագիրք հայոց», ԺԲ. հատոր, Ժ. դար, Գրիգոր Նարեկացի, Անթիլիաս-Լիբանան, 2008:

17 Մասնավոր շնորհակալություն ենք հայտնում Մաշտոցյան Մատենադարանի գլխավոր ավանդապահ Գևորգ Տեր-Վարդանյանին՝ ճառի թվային տարբերակների ձևեր բերման համար:

**ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵԶՆԿԵՑԻՈՅ ԱՍԱՑԵԱԼ ՆԱԽԵՐԳԱՆ
Ի ԲԱՆ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ*, ՈՐ ԱՍԷ. «Ի ՍԿԶԲԱՆԷ ԷՐ ԲԱՆՆ, ԵԻ
ԲԱՆՆ ԷՐ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ, ԵԻ ԱՍՏՈՒԱԾ ԷՐ ԲԱՆՆ»
(ՅՈՎՀ. Ա. 1)**

Յամենայն² գոյիցս, որք միանգամ ի գերագոյ Գոյէն եւ ի սկզբնապետագոյն³ /110բ/ Պատճառէն բաղկացան հիւսքանչ եւ զարմանալի արարչակերտութեամբ, միայն բարգաւաճեալ ճոխութեամբ՝ պանծալի երեւեցաւ մարդկայինս սեռ՝ շքեղացեալ բանական շնորհիւ եւ պատկերաւ զարգարեալ Սկզբնատպին: Սակայն յետ արտաքսելոյն յաստուածատունի դարխտէն եւ ի կենաց վայրէն, զանազան եւ ոչ համաքատակ յիմաստ, եւ ի բանս, եւ ի գործս գտանին՝ ըստ սէրունեան⁴ հրամանին, քանզի ոմանք զլայն⁵ եւ զընդարձակն ընթանալով պողոտայ, ընդ որ բազումք մտանեն, եւ կէսք զնեղն⁶ եւ զանճուկն ընդբելով շաւիղ, զոր սակաւք գտանեն: Եւ նոքա դարձեալ, որք զնեղ⁷ եւ զառիւվեր ճանապարհն կամեցան գնալ, ըստ քառից յեղանակաց տարրորշին ի միմեանց՝ ի շնորհականն, ի⁸ բնականն, ի⁹ վարժականն եւ ի վարդապետականն:

Եւ է շնորհականն մարգարէականն եւ առաքելականն, որք տգէտք

եւ թարց դպրութեան ելով, սակայն զառայտահոս¹⁰ ծորանս յոգնագեղն ուխից շնորհաց Սուրբ Հոգւոյն արբեալք զմայլեցան եւ լցեալք¹¹ աստուածային /111ա/ գանձիւք իմաստութեան հին եւ նոր փարթամութեան, ի ձեռն որոց երկոքին կտակքն¹² տառապեցան, բայց այս ո՛չ է ամենեցուն եւ ո՛չ ըստ նախալաւժարութեան կամաց, այլ զորս միանգամ ընդբեաց եւ կոչեաց Աստուած, որպէս զնախամարգարէն ի մորենւոջն՝ լինել հաւատարիմ ի վերայ ամենայն տանն նորա, եւ զՅեսսէածինն Դաւիթ առնկալաւ ի հաւսէ խաշանցն յաթոռ թագաւորութեան: Եւ զառաքեալսն ի ծովակէն կոչեաց՝ քարոզել զկենացն Բան, որոց արբոյց զհոլրն կենդանի, եւ զորս երկնային դինեալ իմաստութեանն ուռճալրացոյց, եւ նոքաւք զամենայն ագամայինս բնութիւն յերկնահոս եւ յաստուածային խառնարանէն զմայլեցոյց¹³:

Իսկ բնականն, որք բնութեամբ իմաստնագոյն եւ հանճարեղք երեւեցան, որպէս նահապետքն առաջին՝ Նոյ, եւ Աբրահամ, եւ Յոբ, եւ Կռնե-

* Ա արաբեալ ի բանն] ասացեալ նախերգան ի բան Անգարանին

2 Ա ամենայն

3 Բ սկզբնագոյն

4 Բ փրոտեստան

5 Ա զլայն

6 Ա զնեղս

7 Բ զնեղն

8 Բ եւ

9 Բ եւ

10 Բ զառայտահոս

11 Ա լցեալ

12 Ա կտակքն

13 Կիրակոս Երզնկացիի հալամարար աչքի առաջ է ունել շարականագրի հետեւյալ փողերը. «Որ արբուցեր երկնատըր զինեալս իմաստութեան զնոգիս սրբոց քոց առաքելոցն, որք արբուցին փրկմեցելոց որդոց Աղամայ գրաժակն ուրախարար յայգոյն Եղեմայ. աղաչեմք». «Կամոն Պենսիկոստիլն երկրորդ ատուրն». փնն Շարական, էջ 256:

լիոս¹⁴ եւ այլք բազումք, որք աւրէնս ոչ ունելով՝ բնութեամբ զաւրինացն գործեցին:

Իսկ վարժականն¹⁵ է, որ ուսմամբ եւ մակացութեամբ ուշ նպատակի¹⁶ եղեալ է ելանել ի վարդապետականն:

Եւ վարդապետականն¹⁷ է, որք միանգամ զգործականն կատարեալով՝ ժամանեցին ի տեսականն գիտութիւն, զի գործ տեսութեան ասանջական է, քանզի կատարումն արդիւնականացն սէր է, եւ գիտնականացն՝ խորհուրդք աստուածաճառք, եւ սկիզբն երկոցունց՝ հաւատք եւ բնաբոյս գիտութիւն: Վասն զի ըստ բնական բարուցն բոլոր զաւրանայ անձն բանական իսկապէս ունակութեամբ՝ ըստ իմանալի գիտման առ ազգակիցն ձգտել տեսութիւն եւ բաղձանս եւ զօրէն հրոյ անխոնարհ կայիւք՝ եթէ ոչ ընդ ծանու եւ հակեցաւդ¹⁸ իրիք կապիցի, միշտ ի վեր կոյս շարժիւք ընդանեբար հոմասեռիցն վերաբերիլ, այսինքն՝ զի նախկին է բնականն¹⁹ գիտութիւն, եւ ապա ելանէ յայնմանէ ի վարժս կրթութեան եւ յուսումն իմաստութեան, ուստի լինի կատարեալ գիտութիւն, եւ ի կատարեալ գիտութենէն՝ վարդապետութիւն: Սակայն զայս գիտել արժան է, զի զիւրաքանչիւրսն ի նոցանէ ստանալ կարէ եւ միւսն, այլ զառասութիւնն²⁰ ընկալաւ յառաւելագունէն, քանզի ոչ բնութիւն ի վաղճան²¹ գալ եւ ի զրաւ հասանել առանց ուսանելոյ

կարէ եւ ոչ վարժ կրթութեան՝ եթէ ոչ յառա/112ա/ջագոյն հիմն առեալ հաստատեցի բնութեամբ եւ վարդապետութեամբ, եւ ոչ վարդապետութիւն առանց բնութեան եւ վարժից կրթութեան կատարել կարաւդ²² է, որպէս ասէ սքանչելին Փիլոն²³:

Իսկ ես թափուր եւ ունայն գոլով յամենայնէ, զի ոչ ընկալայ շնորհս յԱստուծոյ որպէս գումպար խմբից²⁴ առաջին սրբոցն, որք յորովայնէ մաքրեցան տաճար Աստուծոյ եւ բնակարան Հոգւոյն Սրբոյ, եւ ոչ վարդապետական հանճարոյ արժանացայ յազգս ոչ գոլոյ բնական իմաստութեան²⁵ եւ փոքրատար ունելոյ զանաւթս մտացս բնութեան, եւ զի ոչ տքնեցայ յոլով ժամանակս ի դրունս իմաստնոց՝ կրթելով ի վարժս մակացութեան, եւ ոչ զաստուածային մատեանսն անընթ[հ]ատ²⁶ ի վերայ բազկաց կրեցի, եւ ոչ եռանդնաշարժ սիրով փափաքմամբ կորզեցի զստինս հոգիւնկալ վարդապետաց²⁷, որով աճեցեալ ի չափ հասակի կատարմանն ժամանէի, այլ վարկպարագի եւ գործ առ գործով եղէ առ այսոսիկ, քանզի բազում զգուշութեան եւ ստէպ արթնութեան պէտք են այնոցիկ, որք աստուածայնոց եւ Սրբազանից Կտակարանացն ձեռնարկեն ուսման եւ տեսութեան, խոհական մտաց եւ զաւրեղ բանի, /112բ/ այլեւ վարուց մաքրագունից, որպէս զի մի՛ պայծառագոյն տեսութիւն²⁸ իմաստիցն

14 Բ Կոտնելիոս

15 Ա վարժական

16 Բ նպարիկ

17 Ա վարդապետական

18 Բ իսկեցող

19 Բ բանական

20 Բ գառասութիւն

21 Բ վալճան

22 Բ կարող

23 Դժվարանում ենք մատնանշել օգտագործված աղբյուրը:

24 Ա խնայից

25 Բ իմաստութիւն

26 Բ անընթա

27 Բ վարժապետաց

28 Բ + իմ

ի²⁹ նսեմ եւ աղջամուղջ աղքատիմաց մտացն ընդ անտեսութեան գրուանաւ ծածկեցի, եւ աղաւաղեալ մեծաբուսութիւն քաջատուհմութեան գերապաշտուն բանից ի կշիռ զաւրութեան անիմաստնայտից³⁰ չափեցի, քանզի եւ ոչ յայտոսիկ ձեռնարկաւացն յանդգնութեամբ եւ յոլովիւք ի հասմանէ գերակատարն անկեալ ի վայր իմաստից տեսութենէ արծակիլ գիտեմ անպատիւ³¹, քանզի³² որք միանգամ իմաստասիրութեանն տեսչան բանի, նախ ընթոն³³ եւ պատշաճ է զակն հոգւոյն մաքուր լինել յամենայն ախտաւոր իմաստից, եւ անբիծ եւ անարատ վարս բերել յանձին, եւ առ այսոսիկ ունել ամբողջ եւ անարատ գերիս անձնաւորական զաւրութիւնսն հանդերձ նոցին գործարանաւքն, այսինքն է՝ զտեսաւաղականն³⁴, զգատաւաղականն³⁵ եւ³⁶ զյիշաւաղականն³⁷: Քանզի տեսաւաղականն³⁸ ի ձեռն զգալարանացն առեալ մատուցանէ իմացաւաղականին³⁹, իսկ իմացաւաղականն⁴⁰, որ է գատաւաղականն⁴¹, գատեալ⁴² |113ա| եւ հաւանեալ աւանդէ յիշաւաղականին: Իսկ յիշաւաղականն պահէ զաւանդեալն եւ ի պատշաճ ժամանակի յառաջ բերէ զխնդրելին, քանզի առանձնապէս իմացմունք իմացականին առաքինութեամբ

թիւն եւ մակացութիւն եւ արուեստից բանք, որպէս ասէ մեծն Գրիգորիոս⁴³, եւ որ անպատշաճ ունելով զսոսաձեռնարկէ յուսումն իմաստասիրութեան՝ թերի եւ անկատար գտանի:

Իսկ ես յամենեցունց յայսցանէ զրկեալ՝ յընդրաւաղական տեսութենէ եւ որ ընդգէմն տեսանի ի գերալիք եւ պատարուն ունելով փոխանակ տեսաւաղականին⁴⁴, վճիտ եւ պարզ հայեցաւութեանն⁴⁵ կուրաց քատակել, որք ոչ կարեն յաղագս գունից եւ որակաց շարաբանել եւ ընդ գատաւաղականին ընդրութեան զմանասեռա⁴⁶ յայլասեռիցն, այսինքն⁴⁷՝ զպիտակ բարին եւ զճշմարիտ, անընդրաւաղապէս⁴⁸ գատմամբ շփոթեալ, եւ զչար⁴⁹ փոխանակ բարւոյ ընկալեալ, եւ զճշմարտութիւնն ընդ ստութեանն փոխանակեալ, եւ փոխանակ յիշաւաղականին⁵⁰ պաշտաւութեան մոռացմանն անդնդովք |113բ| աղաւաղեալ ամենայն աւանդեալքն յամենափառթամ եւ ի հարուստ րաբունապետէս:

Եւ արդ, որոց⁵¹ ո՛չ յուսացայց կրից պատժականի⁵² ի ժպիրհն ձեռնարկութեանց փոքու զմեծամեծսն կշռել, վասն այսորիկ հիացումն եւ ամիշութիւն⁵³ պաշարէ զմիտս իմ, եւ զողումն եւ սասանումն՝ զմար-

29 Բ > ի

30 Բ իմաստնայտից

31 Բ > քանզի եւ ոչ... գիտեմ անպատիւ

32 Բ + որ

33 Բ ըմբոն

34 Բ գրեաւաղականն

35 Բ գրաւաղականն

36 Բ > եւ

37 Բ զյիշաւաղականն

38 Բ րեստականն

39 Բ իմացաւաղականին

40 Բ իմացաւաղականն

41 Բ դատաւաղականն

42 Բ դատել

43 Դժվարանում ենք նշել, թե ո՞ւմ նկատի ունի Կիրակոսը «մեծն Գրիգորիոս» անվան ներքո եւ ո՞րն է նրա օգտագործած աղբյուրը:

44 Բ րեստականին

45 Բ հայեցողութեանն

46 Բ զմանասեռն

47 Բ + է

48 Բ անընդրաւաղապէս

49 Բ զչարն

50 Բ յիշաւաղականին

51 Ա որով

52 Բ պատժականի

53 Բ ապաշտապիւն

մինս, եւ ընդ անասութեամբ⁵⁴ փակեալ կափուցանէ զբերան իմ եւ զլեզուս ի քիմս իմ⁵⁵ մատգեալ շխթայիւք պարաւանդէ՝ անշարժ եւ անբարբառ շրթամբք⁵⁶ առկայացեալ: Տինս եւ ահաբեկատեսիլ եւ երկնահանգէտ ատեանս զարհուրեցուցանէ զիս, եւ աստուածաբեալ, եւ վեհմամիտ, կորովաբիր եւ հրաշեայ մեծ ըաբունապետիդ տեսիլ զարմացուցանէ զիս, եւ գերադէտ եւ արփիածեմ կաճառք սրբազան ծանաւթից⁵⁷ քոց պակուցումն եւ քստմնումն արկանէ ի վերայ իմ: Սակայն յուսացայց յայն, որ «տայ ամենայնի առատապէս եւ ոչ նախատէ» (Յակ. Ա. 5) եւ ի քաղցրութիւն բարերարութեան անարգամեծար մեծ ըաբունապետիդ⁵⁸, եւ ի մաքրափայլ եւ ի սրբանուէր աղաւթս գերապատիւ եղբարց եւ ձեռն /114ա/ ի կիր արկից այսմ իրաւդութեան⁵⁹ սատար աւգնականութեան առեալ զնիզակակցութիւն աղաւթից ձերոց, որպէս զի ոչ պատահեցայց դատապարտութեան, թէպէտեւ յոյժ վերջ յարժանաւորութենէն⁶⁰ գտանիմ, զի եւ յայսոսիկ ոչ եթէ որ ոչ ըստ արժանաւորութեանն չափէ պատժի, այլ որ ոչն ախորժէ⁶¹, դատապարտի: Զի թէպէտ ոչ կարացից արփիածեմ լինել ի բարձունս հողմով հանճարոյ հնչեցեալ, եւ ընդ արեգական, եւ լուսնի, եւ աստեղաց շուրջ գալով եւ ընդ ամենայն երկնի, եւ աշխարհի, եւ անդուստ յառեալ⁶²

կարկառել, իբրեւ ի բարձր դիտանոցէ անձաւաց⁶³, եւ տեսանել զանբաւ եւ զանհաս⁶⁴ տեսութիւն բանիս իմաստից: Սակայն որպէս զընկղմեալ փոքր-ինչ, թեւագիւտ եղեալ ի ստորեաւ, կացեալ տարրական⁶⁵ նիւթոյս, ծովասաստ կուտակեալ կոհակաց ալեաց սահանաց ի վերայ ելեալ սահեցայց, թանճրամած մտաւք եւ ճայրոտեալ աշաւք սուղ ինչ յառեալ դիտեցից զճառագայթս արեգակնապայծառ⁶⁶ եւ արփիափայլ բանիս, որ ասէ. «Ի սկզբանէ էր Բանն»: /114բ/

Բայց պարտ եւ պատշաճ վարկանիմ նախքան ի քննութիւն մտանել բանիս իմաստից⁶⁷, զխոստովանութիւն⁶⁸ դաւանութեան իմոյս ճշմարիտ հաւատոյ առաջի արկանել⁶⁹ ձեզ՝ իբրեւ խորտիկ ամենասքանչ հոգեւոր խրախճանութեան, քանզի արմատ ամենայն բարեաց եւ սկիզբն եւ կատարումն է անժամանակն էութիւն, յաղագս որոյ պատշաճ է հիմն դնել բանիս զնոյն Ինքն զէն ճշմարիտ, եւ զաւարտումն ի Նա գլխաւորել:

«Այլ որ Շտեմարանապետն է ամենայն շնորհաց, ուստի «ամենայն տուրք բարիք եւ ամենայն պարգեւք կատարեալք»⁷⁰ (Յակ. Ա. 17) զեղուն, որ «զամենեցուն կամի զկեալն եւ ի գիտութիւն ճշմարտութեան հասանել» (Ա. Տիմ. Բ. 4), տացէ եւ մեզ յիւրոցն աննուազ պարգեւացն առնուլ արժանապէս ըստ բարեւէր կամացն՝ որպէս հաւատարիմ տնտես գիտու-

54 Բ անասացութեամբ

55 Ա > իմ

56 Բ շրթամբք

57 Բ սրբազանից] սրբազան ծանաւթից

58 Բ րաբունապետիդ

59 Բ իրողութեան

60 Բ ի յարժանաւորութենէն

61 Բ ախորժի

62 Ա յառել

63 Բ անձաւաց

64 Բ զանճառ

65 Բ փարական

66 Բ արեգական կայծ] արեգակնապայծառ

67 Բ իմաստիցս

68 Բ խոստովանութիւն

69 Բ արկել

70 Բ կատարեալ

թեան Բանին, որ է հաց ի յերկնից իջեալ, կերակուր հոգւոց բանականաց եւ աւրինաւք մատակարարեալ⁷¹, եւ ձեզ մտադիւրութեամբ եւ բարիութեամբ հաւանութեամբ ընդունել եւ տալ պտուղ՝ ըստ յոգնաբեղուն եւ պարարտ /115ա/ երկրին յաննախանձ սերմանաւդէն՝ զչորրորդն ընկալեալ մասն կենացն սերման⁷²: Եւ սկսեսցուք⁷³ ուստի սկսանելն վայել է՝ ի դաւանութիւն հաւատոյն ճշմարտութեան, որ է հիմն եւ արմատ ամենայն բարեաց, քանզի եւ Տէրն զայս եղ հիմն Եկեղեցւոյ Իւրոյ՝ ասելովն⁷⁴ առ նախնի դաւանողն Պետրոս, եթէ դու քոյով խոստովանութեամբդ ես իբրեւ զվէմ հաստատուն եւ անշարժ. «Եւ ի վերայ այդը վիմի շինեցից զԵկեղեցի Իմ» (Մատթ. ԺԶ. 18), այսինքն՝ զամենայն հաւատացեալս եւ ճշմարիտ խոստովանաւորս⁷⁵ համագոյ եւ զուգական Երրորդութեանն: Նաեւ շինաւ յինչ Եկեղեցւոյ Պաւլոս ասէ. «Շինեալ էք ի վերայ հիման հաւատոյ առաքելոց եւ մարգարէից» (Եփես. Բ. 20), եւ թէ՛ «Ես իբրեւ զիմաստուն ճարտարապետ հիմն եղի» (Հմմտ. Ա. Կորնթ. Գ. 10) զհաւասան⁷⁶, որ ի Սուրբ Երրորդութիւնն, յորոյ վերայ գեղեցկապէս յարմարի շինուած⁷⁷ ամենայն առաքինութեան:

Եւ արդ, այս է ճշմարիտ հաւատոյ դաւանութիւն, որպէս աւետարանական⁷⁸ Հոգին ուսուցանէ, զի միում բնութեան աստուածութեան երկու գէմս եւ երկու առանձնաւորութիւնս

աներկբայաբար /115բ/ եւ առանց յապաղանաց քարոզէ գոլ, եւ երեք⁷⁹ են, զորոց թիւն է, զորս յատկաբար եւ ոչ հասարակապէս ունին՝ ծնաւորութիւն⁸⁰, եւ ծնելութիւն, եւ ելաւորութիւն⁸¹:

Արդ, խոստովանիմ զՀայրն⁸²՝ անսկիզբն եւ անծին, անպատճառ եւ ծնաւոր, եւ պատճառ, եւ յառաջաբարաւոր: Ոչ յումեքէ եղեալ, եւ ոչ Ինքն զԻնքն արարեալ. ոչ ինչ յառաջ քան զՆա, եւ ոչ զորդ ընդ Նմին, այլ Ինքն գոլով սկիզբն եւ պատճառ ամենայնի՝ համագոյիցն ծննդեամբ եւ ելաւորութեամբ, եւ եղականացս արարչութեամբ:

Այսոքիկ դիմաց առանձնականութիւնք ի Հաւրէն թակուրեան ասին գոլ, եւ ոչ յարմարին սոքա ո՛չ Որդւոյ եւ ո՛չ Հոգւոյն Սրբոյ, բայց բնութեամբ եւ էութեամբ զուգակից, եւ փառակից, եւ արարչակից. էութիւն ճշմարիտ, գոյ կատարեալ, անեղ, անժամանակ, անիմանալի, անտեսանելի, անճառելի, անհաս, պարզ, անզննին, անկէտ, անսահման, աներբ, անուր, անբովանդակելի⁸³, անայլայլելի, անփոփոխ, գերաբուն, գերագոյ, գերալոյս, գերանճառ, /116ա/ եւ որ սոցին նմանի բնութեան, հասարակութիւն տեսանին⁸⁴:

Խոստովանիմ զՈրդին Միածին՝ Բան Նորին եւ ծնունդ, վասն զի յորժամ ասես Որդի, եւ Բան, եւ Միածին, եւ ծնեալ, այսոքիկ յՈրդւոյ առանձնաւորութիւն վերայբերին

71 Բ մատակարարել

72 Բ սերմանն

73 Բ սկսցուք

74 Բ ասելով

75 Բ խոստովանողս

76 Բ զհաւասան

77 Բ շինուածն

78 Բ > աւետարանական

79 Բ Գ.

80 Բ ծնողութիւն

81 Բ ելողութիւն

82 Ա զՀայր

83 Բ անբովանդակելի

84 Բ ~ հասարակութիւն տեսանի բնութեան

եւ ոչ փոփոխին ի Հաւրէ՝⁸⁵ եւ ի Հոգւոյ անձնաւորութիւն: Զի Հայր ասի Հայրն վասն պատճառ գոլոյն Որդւոյ ծննդեանն եւ Հոգւոյն ելաւորութեան: Եւ Որդին Որդի ոչ յաղաքս արտաւոր ինչ ծննդեան ըստ նիւթականացս, որպէս կարծեն կոյրքն մտաւք, այլ զի ի բնութենէ Հաւր եւ ոչ արարած է, սակայն յեղանակ ծննդեանն անհաս յարարածոց: Եւ Բան ասի, քանզի անարտաբար է ծնունդն ըստ աւրինակի մերոյս բանի, որ ծնանի ի մտաց: Կոչի եւ Միածին, զի ոչ այլ ոք յառաջ քան զՆա կամ յետ Նորա ծնունդ Հաւր, եւ ոչ նախ Հայր, եւ ապա Որդի, որպէս սերական⁸⁶ բնութեանս է աւրէն, այլ որպէս յաւիտենական է Հայր, յաւիտենական է Որդի ընդ յաւիտենականին Հաւր եւ մշտնջենաւորակից Նմին ի⁸⁷ սկզբանն եւ կատարածի՝ ծագման արեգականն նմանելով ճա/116բ/աւգայթից, զի որպէս ոչ նախ արեգակն, եւ ապա լոյս, այլ ի միում ժամոյ⁸⁸ երեւին երկոքին: Այսպէս եւ լոյս Որդի ի լուսոյ Հաւրէն ծագեալ եւ ընդ Նմին մշտնջենաւորեալ: Եւ որպէս ո՛չ փառք առանց լուսոյ եւ ո՛չ պատկեր առանց նախատպի, նոյնպէս եւ ո՛չ Հայր առանց Որդւոյ եւ ո՛չ Որդի առանց Հաւր, զի «Նա է լոյս փառաց եւ նկարագիր էութեան Նորա» (Եբր. Ա. 3), քանզի փառք է Հայր եւ փառացն լոյս Որդի, սկզբնատիպ է Հայր եւ պատկեր աներեւութին Աստուծոյ Հաւր Որդի: Վասն որոյ համագոյ եւ արարչակից դաւանեմք զՈրդի Հաւր, որ է կերպարան եւ ճառագայթ, էութեան նկարագիր, կնիք կենդանի,

իմաստութիւն եւ զաւրութիւն, Հաւր սահման եւ բան, ամենայն աստուածավայելչական կոչմանցն Հաւր՝ էապէս ունաւդ որպէս նոյնագոյ բնութիւն: Աստուած յԱստուծոյ, Անեղ յԱնեղէ, Անժամանակ յԱնժամանակականէ⁸⁹, Կեանք ի Կեանց, Լոյս ի Լուսոյ, ոչ կրսեր քան զՀայր, թէեւ ծնունդ, այլ որքան Հայր՝ Հայր, եւ Որդի՝ Որդի, զի⁹⁰ Հայր՝ Որդւոյ Հայր եւ Որդի ոչ ունեւով, եւ ոչ զՀայրութիւնն ունել կարէ, ըստ որում եւ ոչ Որդի՝ Որդի առանց |117ա| Հաւր, այլ յատկութիւնք երկաքանչիւրոցն ի միմեանց ճանաչին՝ որպէս եւ⁹¹ յառաջաբերին⁹² եւ անծնելաբար բղիսումն⁹³ ի Հաւրէ, եւ Հոգին Սուրբ եւ Միութարիչ ի Սորին առանձնաւորութիւն յատկութեան տեսանի, եւ անկարելի է փոխիլ ի Հաւրէ⁹⁴ եւ յՈրդւոյ ենթակայութիւնս: Զի թէպէտեւ ծնեալն զբնութիւն ունի զծնաւդին իւրոյ, զի նոյն է բնութեամբ, այլ դէմս ոչ ունի զիւրոյ ծնաւդին, այլ զիւրն ըստ իւրոյ առանձնական յատկութեանց, նոյնպէս յառաջաբերին⁹⁵ զյառաջբերաւդին ունի⁹⁶ նոյն գոլոյ ընպոնութեան⁹⁷, իսկ իւրովք⁹⁸ առանձնական յատկութեամբք դէմք զիւրն եւ ոչ զյառաջբերաւդին ունի, ըստ որում Հոգին Սուրբ, որ «ի Հաւրէ ելանէ» (Թովհ. ԺԵ. 26)՝ էակից Հաւր եւ փառակից Որդւոյ, նոյն բնութեամբ

85 Ա Նաւր

86 Բ սիրական

87 Ա > ի

88 Բ ժամ

89 Բ յԱնժամանականէ

90 Բ + եւ

91 Բ > եւ

92 Բ յառաջբերիլն

93 Բ բխումն

94 Ա Նաւր

95 Բ յառաջ բերելն

96 Բ ունի

97 Բ ընթանութեան

98 Բ որովք

համագոյիցն, ամենայնի հաղորդեալ
զուգական, որ ինչ զՀաւրէ եւ զՈրդե-
ւոյ ասացան անեղութեանն, եւ որ ի
կարգին է: Վասն զի ոչ ինչ առաւե-
լութիւն եւ նուազութիւն ի պաշտե-
լի Երրորդութիւնն տեսանի, այլ հա-
մայնիւք գոլով գոյք եւ հաւասար եւ
միաւոր, բաց յանձնաւորութեանցն
յատկութեանց, եւ որ նոցին հետեւի,
այսինքն՝ զի Հայր՝ Հայր, եւ Որդի՝
Որդի⁹⁹, եւ Հոգին Սուրբ՝ Հոգի: /117բ/
եւ ոչ է իմանալ եւ կամ ասել զՀայր՝
Որդի եւ կամ Հոգի, եւ ոչ զՈրդի՝ Հայր
կամ Հոգի, եւ ոչ զՀոգի՝ Որդի եւ կամ
Հայր, այլ Հայր՝ միշտ Հայր, եւ Որ-
դի՝ միշտ Որդի, եւ Հոգի՝ միշտ Հոգի
Աստուծոյ:

Եւ ըստ առանձնաւորութեանցն
եւ յատկութիւնքն զանազանեալ,
այսինքն՝ ծնաւորութիւն, եւ ծնելու-
թիւն, եւ ելաւորութիւն: Զի ոչ երբէք
Հայր՝ ծնունդ կամ ելաւորութիւն, եւ
ոչ Որդի՝ ծնաւոր եւ կամ¹⁰⁰ ելումն, եւ
ոչ Հոգի՝ ծնունդ եւ կամ ծնաւոր: Այլ
միշտ պատշաճի ծնաւորութիւնն Հաւր,
եւ ծնելութիւնն Որդւոյ, եւ ելաւորու-
թիւնն Հոգւոյ, զի որպէս առանձնա-
ւորութիւնքն անփոփոխելի, այսպէս
եւ յատկութիւնքն:

Է Հայր պատճառ եւ սկիզբն հա-
մագոյիցն ծննդեան եւ ելաւորութեան:
Բայց եթէ ի ժամանակական ոք այսու
զիջանէ ի կարծիս, եւ անպատճառ եւ
անսկիզբն՝ մշտնջենաւորաբար ընդ
սկզբանն գոլով եւ պատճառի՝ նոյնա-
գոյ բնութեամբ: Եւ ո՛չ երիցութիւն եւ
կրսեւրութիւն, ո՛չ մեծութիւն եւ փոքր-
կութիւն, ո՛չ անեղութիւն եւ արար-
կութիւն¹⁰¹ ի համաբունսն իմանի, այլ

ամենայնիւ մի բաց յառանձնաւորու-
թեանցն՝ հաւասար եւ միաւոր բնու-
թեամբ, /118ա/ աստուածութեամբ,
անեղութեամբ, զաւրութեամբ, մեծու-
թեամբ, փառաւք, պատուով, անհա-
սութեամբ, անտեսութեամբ, անճա-
ռութեամբ, իմաստութեամբ, բարու-
թեամբ, արարչութեամբ, նախախնա-
մութեամբ, եւ այս չափս նախերգան
է, զոր եւ մեք դաւանիմք, այսպէս եւ
երկրպագեմք¹⁰²:

Անեղ եւ եղելոցս էակ՝ իմանա-
լեաց եւ զգալեաց, լոյս եւ լուսոյ արա-
րիչ, կեանք եւ կենդանարար ամենայ-
նի, իմաստուն եւ իմաստաբար բոլո-
րից, սուրբ եւ սրբոց սրբարար, բարի
եւ բարեաց պարգեւաբաշխ, զաւրաւոր
եւ զաւրացուցիչ զաւրացելոց, կա-
տարեալ եւ կատարելոց կատարելա-
գործ¹⁰³»: Այսուհետեւ սկիզբն արաս-
ցուք հանդերձ Աստուծով առաջիկայ
իրաւորութեանս, եւ դուզնաքեայ ինչ
յազագս աւետարանչացն շարադրես-
ցուք զորպիսութիւն ճառիցն, որքան
հասու կարեն լինել միտքս մեր, եւ
այնպէս ճանապարհորդեալ՝ անմո-
լար եկեսցուք ի մեկնութիւն աւետա-
րանականին բանին, որ ըստ Յոհան-
նու: Վասն Մաթէոսի, եւ Մարկոսի,
եւ Դուկայ բազումք կանխեալ ասա-
ցին յիւրաքանչիւր տեղիս, իսկ վասն
Յոհաննու, զոր եւ ի գործ արկաք,
զբանս ասացուք, որ ինչ միանգամ
կարեւորն է: Սա զամենայն ժամանակս
իւրոյ առաքելութեանն առանց գրոյ

եղելութիւն. քնն «Մարեմագիրք Նայոց», ԺԲ.
հապոր, էջ 1026:

102 Ա > եւ այս չափս նախերգան է, զոր եւ մեր
դաւանիմք, այսպէս եւ երկրպագեմք: Բ. ձեռագիրն
այսրեղ ավարտւում է:

103 «Այլ որ Շարեմարանապետն է...
կարարելագործ» հալովածը. հմմտ. «Մարեմագիրք
Նայոց», ԺԲ. հապոր, էջ 1024-1026:

99 Բ > Որդի

100 Բ > եւ կամ

101 Նարեկացու փապարում՝ արարչութիւն,

քարոզչը [118բ] զԱւետարանն, իսկ իբրեւ կարգեցան երեք Աւետարանքն եւ գրեցան եւ հասին առ նա, որպէս ասի բանն՝ ընդունելի եղեն նմա, եւ վկայեաց, եթէ ճշմարիտ գրեցան, այլ պակասէ ի նոցանէ, որ ինչ միանգամ գործեցան ի սկզբան վարդապետութեանն Քրիստոսի, զոր եւ մեք կարաւ հմք գիտել, եթէ երեք աւետարանիչքն յետ ընթեռնելոյն Յովաննու Մկրտչի ի բանդ, որ ինչ գործեցաւ ի Տեառնէ, գրեցին, որ եւ ցուցանի սկիզբն ճառից նոցա, եթէ յետ քառասուն աւուր իբրեւ պահեաց Տէրն եւ զփորձապետն յաղթահարեաց, սկիզբն արարին պատմութեանն իւրեանց ըստ Մաթէոսի գրելոյն, եթէ՝ «Յորժամ լուաւն՝ եթէ կալան զՅովհաննէս, փոխեցաւ ի Հրէաստանէ ի Գալիլեա» (Մատթ. Գ. 12): Իսկ Մարկոս՝ «Եւ յետ մատնելոյն Յովաննու, եկն Յիսուս ի Գալիլեա» (Մարկ. Ա. 14): Իսկ Դուկաս կանխեալ գրեաց. «Հերովդէս ի վերայ ամենայն չարեացն, զոր գործեաց յաւել եւս ունել զՅովհաննէս եւ եղ ի բանդի» (Դուկ. Գ. 19-20): Ուստի աղաչեցին զՅովհաննէս առաքեալն եթէ այն ժամանակ, որ թողաւ յայլոց աւետարանչացն, որ գործեցաւ ի Տեառնէ, տացէ նոցա գրով, որ նախքան զմտանելն Յովաննու ի բանդ, եղեն ի Քրիստոսէ հրաշագործութիւնքն, [119ա] զոր եւ գրեաց իսկ Յովհաննէս. «Ջայս արար, ասէ, սկիզբն նշանաց ի Կանայ Գալիլեացւոց եւ յայտնեաց զփառա իւր» (Յովհ. Բ. 11)՝ ցուցանելով զայն գոլ առաջին հրաշագործութիւն, եւ ապա երբեմն յիշատակեաց զՅովհաննէս յիւրում Աւետարանին, զոր ինչ գործեցաւ նախքան զմտանելն Յովաննու ի բանդ: Իսկ երեք աւետարանիչքն, որ ինչ զկնի մատնելոյն Յովհաննու

ի բանդ գործեցաւ ի Քրիստոսէ գրեցին: Այլ թէ վասն է՞ր արդեաւք Յովհան[ն]էս լոյս ի դարութեանն, որ վասն ծննդեան Փրկչին մերոյ ըստ մարմնոյ, նախ եւ առաջին այս իսկ է պատճառն, զի Մաթէոս յառաջագոյն գրեաց զայն եբրացւոցն նոցին լեզուաւն յետ է. ամի վերանալոյն Տեառն յերկինս: Եւ ապա Մարկոս գրեաց Աղեկասանդրացւոցն ի խալտի լեզու յետ Եփ.ան ամի խոնարհ եւ համառաւտ բանիլ՝ ըստ նմանութեան վարդապետին իւրոյ Պետրոսի: Եւ Դուկաս Հռոմայեցւոցն յետ ԻԲ. ամ ի վերայ առատ բանիլ՝ ըստ աւրինակի իւրոյ վարդապետին Պաւլոսի, որ էր իբրեւ զյորդանոսանս գետոց: Իսկ Յովհաննէս յետ Հ. ամի՝ ըստ աւրինի Ասիացւոցն նահանկաց՝ զկնի արձակելոյն ի Պատմոս կղզոյն [119բ] ի Յոյն լեզու սկսաւ գրել վասն աստուածութեան Նորա: Նաեւ չորրորդ գոլով աւետարանչացն՝ ոչ առանց բարձրագոյն խորհրդոյ իցէ, զի ոմանք ըստ չորեքժադեան գոլով արարածոց, ուր պարտ էր համասփիւռ քարոզել Աւետարանն արքայութեան, նոյնպիսի թուով ասացին պարտ էր եւ աւետարանչացն գոլ, որք ընդ տիեզերս էին աւետարանելոց զԲանն կենաց: Իսկ ոմանց հաճոյ թուեցաւ ըստ չորից մշտահոս գետոցն յադենական յաղբերէն յառաջախաղաց եղեալ առ տիեզերաց ո[ւռ]գումն, եւ սոցա գոլով նմանապէս թուով ուռճացեալք ի կենդանական աղբերէն՝ ոռոգանել զպառքեալ միսս մարդկային: Եւ ի վարդաբուրումն չորից մասանց առաքիւնութեան, որ տրամադրեալ է ի հոգիս մեր: Եւ ի խորհուրդ չորից տարերացս եւ չորից հիւթոց, յորմէ կենդանութիւն ի մեզ իջանէ: Եւ չորից յեղանակաց տարւոյն եւ չորեքկարգեան

ականցն, որով քահանայապետականն զարդարէր լանջք (տե՛ս Ելից ԼԹ. 9-10), եւ Դից չափոց մանանային, որ ամբարեալ կայր ի սափորն ոսկի (տե՛ս Ելից ԺԶ. 33): |120ա| Նմանապէս եւ ի քառադէմ կառնն եզեկիեկի, զոր ետես, ունի զաւերինակ չորից աւետարանչացն (տե՛ս Եզեկ. Ա. 4-15), եւ Դ. կառքն Զաքարիայ, զոր ետես ի մէջ Բ. պղնձի լեւանց, եւ ի չորս հիւսուկնքն, որ երթային ի սրումն չորից եղջիւրացն (տե՛ս Զաք. Ա. 20-21): Այլեւ ի թուական¹⁰⁴ արհեստ քառեակն է թիւ խորհրդական եւ պատուականագոյն, քանզի ծնաւդ է կատարեալ թուոյն Ժ. եկին, քանզի ամենայն թիւ, յորժամ շարադրես մինչեւ ի Դ. թիւն, լինի թիւ կատարեալ, որ է Ժ. նեակն, զի մի՛ եւ Բ. լինի Գ. եւ շարաբարդեալ ընդ նոյնն՝ զթիւն երրորդ բացակատարէ զվեց, եւ յարաբարդեալ ընդ նմա՝ զչորսն լինի Ժ., որ է թիւ կատարեալ եւ նուէր Աստուծոյ: Նմանապէս եւ զԸ. եակն եւ զբիւրեակն իմասցիս:

Իրապէս չորրորդ աւետարանիչս իբրեւ յոգւոյ յԱստուծոյ պահեալ նմա զայս բարձրագոյն խորհուրդ իբրեւ առաւել առաքելոյ, որ եւ «որդի որոման» ի Տեառնէ կոչեցաւ (տե՛ս Մարկ. Գ. 17) սակս զերկնայինսն որոտալոյն առ ընդ ոստուցանել եւ բառնալ զմիտս մարդկային բնութեանս, քանզի «Խորհուրդք իմ ինձ. խորհուրդք իմ ինձ եւ իմոցն» (Ես. ԻԴ. 16) լուաք յԱստուծոյ, զի ասէր, յորոց մինս զան|120բ|ճառ խորհուրդն այժմ ճառէ Համարձակ, եւ յիրաւի առաւել ձկտի ի խորս նորա, քան զայլս ի հազարապետաց խորհուրդոյն, վասն զի սիրեցեալ էր ի բանէն աշակերտն Յո-

հանէս եւ հպատակ սիրոյ նորա պաշտաւնեայ, յաղագս որոյ սրայթռիչ երազութեամբ ընդ սիրոյն բարձրացեալ զերագոյն էիցս ի յանկոխ մարդկային մտաց սրբութիւն եւ զմայլեալ անհաս գիտութեամբն ցաւդէ ի մեզ որքան կարեմքս տանել՝ ասելով. «Ի սկզբանէ էր Բանն»:

Ո՞ր իմասցի արժանապէս յաղագս ի սկզբանն, կամ ո՞ր բանից զաւրուութիւն գտցի Համապատուաբար՝ կարելով մերձ կացուցանել զմիտսն՝ Հանդերձալ աւանդելս յաղագս աստուածաբանութեան Որդւոյն Աստուծոյ եւ ոչ մի այլ սկիզբն Բանին, քան եթէ սկիզբն բոլորեցուն ես՝ ասելով. «Ի սկզբանէ էր Բանն»: Այլ զի բանս Հաւաստի լինիցի ի մեզ, եկեցուք եւ սահմանեցուք զսկիզբն, եւ բաժանումն նմին արասցուք: Բայց պարտ եւ պատշաճ է քննել, թէ զո՞ր պարտ է առաջինդ ասել՝ զսահմանե՞լն, թէ՞ զբաժանելն: Եւ արժա|121ա|ն է դիտել, թէ յորժամ Հոմանուն իցէ ձայնն, եւ կամիցի ոք վասն միոյ ուրուք ի նոցանէ ասել եւ ոչ յաղագս բազմացն Համանգամայն ուսուցանել, յայնժամ պարտ է նախ բաժանել եւ ապա զմի ի նշանակեցելոցն, յաղագս որոյ բանն է սահմանել: Իսկ յորժամ զբոլորէն բոլուն Հարկանիցեմք, եւ կամ ոչ Հոմանունն ձայն իցէ, յայնժամ պարտ է նախ սահմանել եւ ապա բաժանել:

Եւ թէ զի՞նչ է Հոմանունութիւն: Հոմանունութիւն է բառանշադիր նշանական յոլովից: Եւ Հոմանունն ասին այնք, որոց անուանքն միայն հասարակ եւ բան գոյացութեանն, այլ որպէս կենդանի մարդն եւ գրեալն: Եւ լինի Հոմանունութիւն ըստ պատահման եւ [ըստ] մտածութեան: Պատահմամբ, յորժամ երկուց իրաց նոյն

104 Բնագրում՝ թվական:

դիպեսցի անուն տիրական եւ առասական. տիրական՝ որպէս ի [Յ]ովաննէս Զաքարեան եւ ի [Յ]ովաննէս Զեբեթեան, եւ առասական՝ որպէս արծուի՝ թռչուն, եւ արծուի՝ շինուած փայտի: Իսկ մտածութեամբ՝ ըստ պատուոյ, ըստ յուսոյ, ըստ աղաւթիցն եւ այլոցն¹⁰⁵: Այսպէս եւ սկիզբն ի հոմանունանցն է:

Արդ, նախ եւ առաջին [121բ] արիստոտելական բացորոշութեանցն հաւանեալ՝ տարրորոշեմք զհոմանունութիւն, եւ ասեմք, եթէ քանի նշանակութիւն ունի սկիզբն:

Երկրորդ՝ թէ յաղագս որո՞յն նշանակութեան է բանս:

Եւ երրորդ՝ յաղագս որո՞յ բանն է ստորագրել կամ սահմանել եւ յետ բացորոշութեանցն Արիստոտելի:

Չորրորդ գլուխն, յորում ասեմք, թէ վասն է՞ր Բան մականուանէ զՈրդի:

Եւ Ե.երրորդ՝ թէ ընդէ՞ր ոչ ասաց Որդի կամ Յիսուս Քրիստոս, այլ՝ Բան: Եւ այսպէս կատարումն արասցուք բանիս: Եկեսցուք յառաջին գլուխն եւ ասասցուք, թէ ըստ որք[ան] նշանակութեան ասի սկիզբն: Արդ, սկիզբն ոչ պարզաբար ասի, այլ՝ հոգեակի, քանզի սկիզբն ասի պատճառական, որպէս Հայր՝ Որդւոյ ծննդեան եւ Հոգւոյն՝ բխման:

Դարձեալ՝ սկիզբն է եւ արարչական՝ ըստ որում գոյացան յէջն եղեալքս ամենայն, նախ՝ իմանալիք, եւ ապա՝ զգալիք, որպէս պատմէ Հաւատարիմ բարեկամն Աստուծոյ նախամարգարէն Մովսէս. «Ի սկզբանէ» (Ծննդ. Ա. 1), եւ «Ասաց Աստուած. «Եղիցի լոյս» (Ծննդ. Ա. 3), զի եւ

վայելէր իսկ մեծի լուսոյ արարչութեանն [122ա] ի լուսոյ զսկիզբն առնել, որով լուծանէր զխաւարն, եւ որ ունէր, յայնժամ զանգարդութիւնն եւ զանկարգութիւնն:

Ասի դարձեալ սկիզբն եւ յարացուցական, որ եւ՝ տեսակք, եւ՝ նախագաղափարք կոչին, զի մասնաւորականի եւ անհատի մտացն է իմն յառաջագոյն յարացոյց՝ իբրեւ սկզբնատիպ եւ նախագաղափար:

Եւ դարձեալ մասնաւորական ի զգալութեանն ի ներքոյ իւր ունելով, որ ահա տպաւորէ իսկ յառաջ քան զմասնաւոր իմանալիս էր նոյնինքն սեռական իմանալին, որոյ կցորդութեամբ եւ մասնաւորքն անուանեցան, եւ յառաջ քան զմասնաւոր սգալիս էր սեռական սգալին:

Դարձեալ սկիզբն է հիւթական, որպէս նիւթ եւ տեսակ Դ. տարերացդ եւ Դ. տարերքդ նմինամասանցդ, եւ նմանայմասունքն՝ գործիականացն, եւ գործիականքն՝ մարդկային մարմնոյս աշխարհի: Սկիզբն է սեռական որպէս կենդանին՝ բանականին եւ անբանին, եւ իւրաքանչիւր սերման սկիզբն՝ կամ ի ծնաւդէն, կամ ի տեղւոյն, յորմէ ոք եղեւն:

Ասի սկիզբն եւ նախագոյական, որպէս սիրտ կենդանւոյն եւ հիմն տան եւ աւղնափայտ նաւի: [122բ]

Եւ է այլ սկիզբն գործիական՝ որպէս տապար հիւսսան եւ քնար երաժշտականի:

Սկիզբն է եւ՝ բանական, եւ՝ աւրէնսդրական, որպէս «սկիզբն իմաստութեան՝ երկիւղ Տեսուն» (Առակ. Ա. 7), եւ «Սկիզբն բարի՝ կենաց արդարութիւն» (Հմմտ. Առակ. ԺԶ. 5):

Սկզբունք ասին եւ քաղաքական զաւրութիւնք արժանաւորութեանցն

105 Տե՛ս Յովհաննէս Երզնկացի, էջ 216:

առաւելութիւն, եւ զի յօղովագոյն սկիզբն տացուք բանիս:

Սկիզբն է եւ թուական, որպէս սկիզբն դարից եւ կոճատաց միական, եւ սկիզբն դարիցն միայն երկեակն: Բայց այսոքիկ սկզբունք ոմանց սկզբունք, քանզի իւրաքանչիւր ոք սկիզբն: Սկիզբն գծի նշան, եւ սկիզբն վերերեւութեան գիծ, եւ սկիզբն մարմնոյ վերերեւութիւն եւ ըստ շարադրութեան բանի սկզբունք տառք:

Սկիզբն է եւ աստեղաբաշխական, որպէս սկիզբն լուսաւորացոյ՝ լոյսն համատարած եւ համասփիւռ, եւ սկիզբն աստեղացն՝ արեգակն, եւ սկիզբն մոլորակացոյ՝ Երեւակն, եւ սկիզբն կենդանակերպիցն՝ խոյ:

Սկիզբն աւուրց միաշաբաթ է՝ ըստ այնմ. «Եւ եղեւ երեկոյ, |123ա| եւ եղեւ վաղորդեան՝ աւր առաջին» (Ծննդ. Ա. 5):

Սկիզբն ամսոց՝ Նիսան, ըստ որում ասէ. «Ամիս այս եղիցի ձեզ սկիզբ, ամսոց առաջին եղիցի յամիս տարւոյ» (Ելից ԺԲ. 2):

Եւ սկիզբն աջաւղակ յեղանակաց տարւոյն գարունն՝ ըստ այսքան նշանակութեան, եւ որ այսմ նման ասի սկիզբն: Այլեւ ոչ այնպէս սկիզբ, քանզի ո՛չ ընդ ումեք կապի, ո՛չ ումեք ծառայէ, ո՛չ ընդ ումեք տեսանի, այլ ազատ է՝ անտարալուծեալ առ այլ ունակութեան անվերադիր մտածութիւն, ըստ որում ոչ է ի վեր ելանել խորհրդովք, զորոյ ոչ է գտանել զնախկինն, քանզի թէ հակառակեսցես երեւմամբ խորհրդոյ զանցանել զսկզբամբն, գտցես նախքան զամենայն զխորհուրդս: Թո՛ղ զքո ընթանալ զմիտադ, որքան կամեսցիս եւ ձկտեսցիս ի վեր, եւ ապա գտցեալ քեզ բիւրս մոլորեալս՝ ի բազում ընդունայնս

զնացեալ, եւ դարձեալ վերստին իւր զսկիզբն առնել, վասն զի իմանալոյն արտաք յօղովագոյն գտանի սկիզբն: |123բ|

Արդ, յաղագս այլոց սկզբանցն միջնոցն ասեմ եւ վերջնոցն. իմաստասիրել ոչ է մերձակայ ժամուս, բայց միայն վասն առաջնոյն, եւ որ այժմ մեզ է հարկաւոր, զոր յերկրորդում գլխիդ հանդերձեալ եմք բացայայտել:

Եկեսցուք եւ յերկրորդ գլուխն եւ ասացուք, թէ վասն որո՞ց սկզբան արտաճառէ աւետարանիչս, թէ՛ «էր Բանն»: Եւ պարտ է գիտել, թէ զպատճառականն եւ զարարչականն, ասէ, սկիզբն: Պատճառական՝ որպէս Հայր Որդւոյ ծննդեանն եւ Հոգւոյն բղխման. Որդւոյ ծննդեան՝ ըստ այնմ. «Ընդ Քեզ է ինձ սկիզբն աւուրց, եւ յառաջ քան զարուսեակ ծնայ զՔեզ» (Սաղմ. ճԹ. 3), եւ թէ՛ «Յառաջ քան զամենայն բլուրս ծնաւ զիս» (Առակ. Ը. 25), եւ Հոգւոյ բղխման՝ ըստ Նորին Տեառն հրամանի. Հոգին Սուրբ, որ են եւ ի Հաւրէ ելանէ (Յովհ. ԺԵ. 26): Եւ արարչական՝ որպէս Աստուած աշխարհի՝ ըստ Դաւթայ եւ Սողոմոնի. «Ի սկզբանէ Տէր զհիմունս երկրի հաստատեցեր, եւ գործք ձեռաց քոց երկինք են» (Սաղմ. ճԱ. 26), եւ «Աստուած իմաստութեամբ հիմունս արկ երկրի, պատրաստեաց զերկինս խորհրդով» (Առակ. Գ. 19): Եւ արդ, որովհետեւ ուսաք, |124ա| թէ վասն որո՞ց սկզբան է բան:

Եկեսցուք եւ յերրորդ գլուխն եւ սահմանեսցուք եւ կամ ստորագրեսցուք զսկիզբն: Եւ պարտ է գիտել, զի սահմանել կարաւորութիւն իցէ զսահմանելիս, եւ զանսահմանելիս ոչ գոյ կարողութիւն սահմանել, բայց թէ այլ ազգ հնարիւք ապացուցութեամբ

յանդիման կացուցանելի է զանսահմանելեացն բան, յորոց մի է եւ առաջիկայ իրաւզութիւնս, որոյ ոչ ունիմք սեռ տալ եւ բաղկացուցիչ զանազանութիւնս, յորմէ սահման սովորեաց բաղկանալ, քանզի պատճառական սկիզբն ոչ ունի այլ սեռականագոյն սեռ, վասն այսորիկ եւ ոչ սահմանէ, այլ ի ձեռն յատկի յայտնի:

Եւ է յատուկ ուրոյն պատճառական ի սկզբանն. անսկիզբն, եւ անծին, եւ ծնաւդ, եւ պատճառ, եւ յառաջաբերաւդ. այսոքիկ ուրոյնք առանձնականութիւնք ոչ յարմարին այլ ումեք ո՛չ համագոյակցացն եւ ո՛չ եղականացս, բաց միայն պատճառին համայնից: Իսկ եթէ սահմանել կամիցիս, է Հաւր սահման եւ Բան Որդին Միածին, որ է ճառագայթ եւ կերպարան, էութեան նկարագիր եւ կնիք Նորա, |124բ| կենդանի իմաստութիւն եւ զաւրութիւն, Հաւր սահման եւ Բան, որպէս ասէ. «Ի սկզբանէ էր Բանն», որպէս թէ ասել՝ յիսկզբանն եւ ի պատճառին էր Բանն եւ Հոգին, այսինքն իսկ Հայր, Բան Որդին: Է Հոգի Սուրբ՝ ըստ այնմ. «Ես եմ ի միջի ձերում» (Հմմտ. Ուլա. ԺԱ. 9), եւ Բանն իմ եւ Հոգի, քանզի միշտ Հայր, եւ միշտ Որդի, եւ միշտ Հոգի Աստուած եղեն. ո՛չ սկսեալք եւ ո՛չ դադարեալք, այլ միշտ ընդ Հաւր կարգեալք եւ թուեալք, զի ոչ երբէք վայելէր կրսեր ասել զՈրդի ի Հաւրէ կամ զՀոգին՝ յՈրդւոյ, վասն զի մեծագունիւն էր արդեաւք անփառաւոր աստուածութիւնն, որպէս յապաղանաւք եկեալ ի լրումն աստուածութեանն, այլ էր միշտ Հայր՝ անսկիզբն եւ սկիզբն, եւ էր միշտ Որդի, այլ ոչ անսկիզբն, վասն զի ի Հաւրէ, ապա թէ ի ժամանակէ առցես զսկիզբն եւ անսկիզբն, վասն զի արարիչ ժամանակաց

եւ ոչ ընդ ժամանակաւ է, եւ Հոգին Սուրբ էր միշտ ճշմարտապէս Հոգի Աստուծոյ՝ ի Հաւրէ յառաջ առաքեալ, այլ ոչ որդիաբար, զի եւ ոչ ծննդեամբ, այլ արտաքս առաքաբար, վասն որոյ ասէ. «Ի սկզբանէ [էր] Բանն»:

Դարձեալ՝ սկիզբն, որպէս ասացաք, զարարչական ասէ, զոր հաւա/125ա/տարիմ բարեկամն Աստուծոյ Մովսէս կանխայայտութեամբ արտաձայնեաց, թէ՝ «Ի սկզբանէ արար Աստուած զերկինս եւ զերկիր» (Ծննդ. Ա. 1): Այնու սկզմամբ, որ եղեւ զեր ի վերոյ քան զժամանակ, վասն զի ժամանակ արեգակամբ եւ երկնի շրջապայտութեամբ չափի, իսկ սկիզբն արարչութեան գեր ի վերոյ քան զժամանակ եղեւ տեսչութեամբ ամենազաւրին Աստուծոյ, եւ հաստատեաց զկազմ[ու]ած աշխարհիս՝ տեղի ուսման եւ դաստիարակութեան, զի մտցեն, բնակեսցեն ի սա խաւսունք, եւ եղիցի նոցա տեղի ուսման եւ խրատու՝ առ ի գիտել եւ ճանաչել զԱստուած, եւ յերեւելեացս ստանալ զհանճար եւ զիմացումն աներեւութիցն՝ ըստ առաքելոյ, թէ՝ «Աներեւոյթք Նորա ի սկզբանէ աշխարհի՝ արարածովքս իմացեալ տեսանին», այսինքն է՝ մշտնջենաւորութիւն եւ էութիւն Նորա» (Հռոմ. Ա. 20): «Եւ զի արագ է արարչութիւն Նորա քան զական թաւթափել, եւ առանց ժամանակի է անուն արարչութեանն, քանզի չիք մասունք սկզբանն եւ ոչ կալ եւ հաստատել: Զի զոր աւրինակ՝ սկիզբն ճանապարհին ո՛չ ճանապարհն է եւ ո՛չ սկսուած տանն՝ |125բ| տունն, սոյնպէս եւ ո՛չ սկիզբն ժամանակին է ժամանակ, նաեւ ո՛չ մասն մի է ի փոքր մասանց նորա, քանզի ժամանակ ո՛չ ի ժամանակի եղեւ, եւ ո՛չ սկիզբն ժամանակին

է ժամանակ, եւ ո՛չ հաստատութիւն աշխարհիս ժամանակաւ է յարարչութենէ Աստուծոյ»¹⁰⁶: Իսկ եթէ սկիզբն արարչութեան աշխարհի անժամանակ է, ո՞րչափ եւս առաւել Արարիչն աշխարհիս իցէ անժամանակապէս եւ անսկզբնաբար ի Հաւրէ ծնեալ: Տեսանե՞ս, թէ որպէս ի ձեռն երեւեկեացս ճանաչի աներեւոյթն, վասն այնորիկ ասաց. «Ի սկզբանէ էր Բանն»:

Բայց պարտ եւ արժան է զարմանալ ընդ առաւելութիւն իմաստութեան աւետարանչիս եւ ընդ առատահոս ծաւալումն շնորհաց Սուրբ Հոգւոյն, որ յոգնազեղն ուխիւք եւ առատահոս բղիժամբ զեղու ի բերանոյ նորա, թէ ո՞րպէս զանեղութիւն Որդւոյ կանխաբանութեամբ բացայայտէ՝ ասելով. «Ի սկզբանէ էր Բանն»: Եւ զի՞նչ այսու յայտ առնէ, այլ զի ցուցցէ, թէ յիսկզբան ժամանակին, յորժամ կանխեաց Աստուած առնել զերկինս եւ զերկիր եւ որ ի մէջ ընդդիմակացն, արարածն է նախքան /126ա/ զնոսա, Բանն էր արարչակից Հաւր եւ Հոգւոյն, «զի ամենայն ինչ Նովաւ եղեւ՝ եթէ Աթոռք, եթէ Տէրութիւնք, եթէ Պետութիւնք. ամենայն ինչ Նովաւ եղեւ» (Կող. Ա. 16), եւ ոչ ըստ մովսիսական պատմութեանն յիսկզբան էին առնուլ արարածոցս սկիզբն լինելութեան եւ Բանին եղանիլ, այլ որպէս զի զանեղութիւն Բանին էրն ցուցանէ, եւ գերագոյն եղականացս կացցէ Բանն, քանզի էր միշտ Բանն եւ է, եւ եղիցի մանաւանդ, թէ է միշտ, քանզի էրն եւ եղիցին ըստ մեզ, ժամանակին հատուածք են հոսանուտ ընդթեանս, որ են միշտ, զայս ինքն զինքն անուանէ ընդ Մովսիսի

խաւսելով ի լերինն՝ զբովանդակ ինքեամբ ի միասին առեալ, եւ ունի զոչ սկսեալն եւ զոչ դադարեալն, քանզի ոչ ունի սկիզբն եւ կատարած՝ ըստ Եսայեայ, թէ՛ «Ես եմ առաջին, եւ Ես եմ առ յապայ» (Ես. ԽԴ. 6), եւ ի Յայտնութեանն, թէ՛ «Ես եմ Ալֆայ եւ Ուլ» (Եսայ. Ա. 10), այսինքն է՝ առաջին եւ վերջին: Զոյգ այսմ եւ զԿաթողիկէին եղ սկիզբն զմշտնջենաւորութիւն ի վերայ Բանին Աստուծոյ հաստատեալ ասելով, որ էրն ի սկզբան:

Արդ, «Ի սկզբանէ էր Բանն», ո՛վ սքանչելոյն, զիա՞րդ իրերաց /126բ/ համապատուաբար ձայնքն լծակեցան, քանզի էրն զոյգ կարէ ի սկզբանն գոլ, իսկ եթէ ասես. «էր երբեմն, յորժամ ոչ էր», լուր Աւետարանին, որ ասէ. «Ի սկզբանէ էր Բանն»»: Իսկ եթէ ի սկզբանէ էր, ե՞րբ ոչ էր, այլ ասիցես նախքան զծնանիլն ոչ էր. գիտեցե՞ս արդեաւք երբ ծնաւ, զի եւ զնախն կարացես ի վերայ բերել անժամանակ էին, վասն զի նախն ժամանակական է՝ զձայնն այլայլոյ ի վերայ եղեալ հնութեամբ, իսկ զժամանակին Արարիչ զիա՞րդ բարեբանագոյն ժամանակեցայց ասացուածոց ի ներքս կալով ունել զլինելութիւն:

Արդ, ժամանակ յերիս հատածս բաժանի՝ յանցեալն, ի ներկայ, յապառնին: Եւ անցեալն. անցեալն իսկ է ներկայ, յորում եմք եւ ապառնի հանդերձեալն: Արդ, էրն զանցեալն նշանակէ, իսկ էն զերեսին ի միասին առեալ նշանակէ, եւ եղիցին՝ զապագայն:

Եւ ի սոցանէ անցեալն ունի զանազան ակս չորս՝ յարայձգական, յարակայ, գերակատար, անորիշ: Եւ նշանակէ յարաձգականն զմասն ինչ ներկայի, /127ա/ յորմէ յիրացն մասն

106 Տե՛ս Բարսեղ Կեսարացի, էջ 17-18:

ինչ արարեալ է, եւ մասն ինչ առնելոյ կայ, ըստ որում ասի դեռ առնէի, եւ նշանակէ զյարաձգականն, որ ոչ է բովանդակեալ, այլ նշանակէ ունել ինչ մասն եւ ի ներկայէն: «Իսկ յարակայն նշանակէ գերկուց անցելոց աւուրց ասդուամն կամ զամսոյ միոյ, կամ զտարւոյ միոյ»¹⁰⁷: Իսկ գերակատար զԺ., կամ զԻ., կամ Լ. ամաց ասդուամն ի՞նչ նշանակէ: Իսկ անորիշն որպէս անունդ իսկ յայտ առնէ, անորոշաբար զամենայն ժամանակն նշանակէ՝ զյարաձգականն, զյարակայ, զգերակատար: Իսկ յաղագս երկց ժամանակացդ այսպէս բրէ եռամեծն Դաւիթ՝ ասելով. «Ասացին ոմանք զներկայ երիցագոյն վասն անցելոցն ընդ նա երկուցն եւս: Եւ այլք զանցեալն յաղագս յառաջանալոյն, ըստ նախադասութեան դարձեալ հարցաւ յոմանց, թէ զի՞նչ է ժամանակ՝ ի գոյի՞ց, եթէ՞ յոչ գոյից:

Որք ի գոյիցն ասեն, զայս ասացին աւրինակ, թէ լուսաւորաց շարժմունք, եւ բնաւ լինելութեանց ածմունք, եւ յարմարութիւնք աշխարհի ի ժամանակի կատարին: Իսկ Արիստոտելէս ասաց յոչ գոյից, որպէս /127բ/ զյուշկապարկացն համբաւ անուամբ միոյն, այլ ոչ ճշմարտութեամբ զանցեալն այսպէս աղարաժ, որպէս զի անցաւ եւ ապականեցաւ, եւ զապառնին զի չէ իսկ ի միջի. զներկայն աներեւոյթաբար իմն, զոր աւրինակ թէ ի քուն ոք կացցէ կամ յայլ զբաւսանս, նաւ զիւրն կատարէ զընթացսն՝ ըստ տարացուցի ջրոյ իջելոյ ի խողովակէ յաւազին տեղի, որ յաներեւութուստով իջանէ ի վերայ աւազի եւ ոչ երեւի եւ ընդ իջանելն ծորի»¹⁰⁸:

Արդ, էրն թէպէտ զանցեալն նշանակէ, սակայն այս էր ի ներքոյ ժամանակի ոչ պարփակի, քանզի ասէ ի սկզբան ժամանակին, յորժամ սկիզբն արար Աստուած առնել զաշխարհս, նախքան զնոսա էր Բանն արարչակից ընդ Հաւր, որպէս ասէ աւրհներգուն. «Ողորմութեամբ Տեառն լի եղեւ երկիր, բանիւ Տեառն երկիրնք հաստատեցան» (Սաղմ. ԼԲ. 5-6), եւ առաքեալ՝ «Այլ մեզ մի՛ է Աստուած. Հայր, յորմէ ամենայն, եւ մի՛ Տէր Յիսուս Քրիստոս, որով ամենայն» (Ա. Կորնթ. Ը. 6). զայսոսիկ եւ երրորդ գլուխն:

Յետ երրորդ գլխոյն աս[ա]յցուք եւ չորրորդ գլուխն ըստ խոստման մերում, թէ վասն է՞ր Բան մականուանէ: Բայց նախ ըստ սովորութեան զբացորոշութեանցն Արիստոտելի զհոմ/128ա/անունութիւն բացորոշեցուք, քանզի հոմանուն ձայն է բանն, եւ ապա թէ յաղագս որո՞յ նշանակութեան է բանն՝ զվարդապետութիւն ի կիր արկցուք:

Արդ, ըստ վերնագոյն բանի՝ գոյացութիւն յԲ. գլխաւոր գոյն սկզբունս¹⁰⁹ բաժանի՝ ի մարմին եւ յանմարմին: Եւ դարձալ՝ մարմինն տարրորոշի ի շնչական մարմին եւ յանշունչ: Իսկ շնչականն տրամատի ի կենդանաբոյս, ի բոյս եւ ի կենդանի: Եւ կենդանի՝ ի բանաւոր կենդանի եւ յանբան: Իսկ բանաւորն բաժանի մահկանացու բանաւորն եւ յանմահ: Իսկ անմահ բանաւորն հատանի յանեղ, անմահ բանաւոր եւ յեղական, անմահ բանաւորն: Իսկ եղական անմահ բանաւոր ի հրեշտակ բանական եւ ի դեւ բանական:

Այլեւ մարդկային բանին կրկին

107 Տէն Յովհաննէս Երզնկացի, էջ 233:

108 «Մարինագիրք Հայոց», Ե. հարութ, Է. դար, էջ 1183, Յովհաննէս Երզնկացի, էջ 232-233:

109 Բնագրում՝ սկզբունս:

է տեսակ՝ ներտրամադրեալն եւ յառաջբերեալն, քանզի ներձայնօջան ներանձինցն ախտից նշանակեն՝ որպէս ներգրեցեալքն ներձայնօջացն: Եւ է ներտրամադրեալ բանն, որպէս թէ սահմանաւ ոք, բացատրեսցէ չար ժամն անձին, որ ի խոհեցաւղական եղեալ առանց իրիք արտաձայնութեան: Իսկ յառաջ/128թ/բերեալ բանն ի ձայնին եւ ի խաւսն ունի գներգործութիւն, եւ է սահման բանի, ըստ քերթաւղացն՝ բան է հետեւակ բառի ի շարադրութիւն՝ գտրամախոհութիւն ինքնայկատար յայտնելով¹¹⁰: Եւ բանին մասունք են ութ՝ բայ, ընդունելութիւն, յաւդ, դերանուն, նախադասութիւն, մակբայ, շաղկապ: Իսկ ըստ իմաստասիրացն՝ բան է ձայն նշանական, որոյ մասանցն նշանակէ իմն իբր ասութիւն, այլ ոչ իբր ստորասութիւն: Եւ մասունք են բանին Ե.՝ անուն, բայ, ստորասութիւն եւ բացասութիւն եւ բացերեւութիւն:

Իսկ եթէ յաղագս որո՞յ բանի ասէ աւետարանիչս մարդկային բանիս, այլեւ հրեշտակաց բանին, քանզի գեկոյց մեզ առաքեալ՝ որպէս թէ հրեշտակաց յատուկ ունել լեզու՝ ասելով. «Եթէ զլեզուս մարդկան խաւսիցիմ եւ զհրեշտակաց» (Ա Կորնթ. ԺԳ. 1) մտածութիւն: Եւ քանզի հոմանունութիւնն մայր է մոլորութեան, տես մի՛ երբէք խաբեսցէ զքեզ հոմանուն ձայն, քանզի զիարդ էր ի սկզբանէ մարդկայինս բան մարդոյն, ուրեմն խոնարհագոյն ընկալեալ զլինելութիւն նախքան զմարդն գազանք, սողունք, անասունք եւ ամենայն, որք միանգամ /129ա/ ցամաքայինք եւ ջրայինք թռչունք, երկին, աստեղք, արեգակն,

լուսին, բոյսք, սերմանք, ծով, երկիր:

Արդ, ոչ եւս ի սկզբանէ էր մարդկային բանս, այլեւ ոչ հրեշտակացն, վասն զի ամենայն ստացուած խոնարհագոյն քան զյաւիտեանսն է գսկիզբն լինելութեան առնլով ի ստացաւդէն: Իսկ որ ի սրտի բանն, եւ նա քան զիւրաքանչիւր ոք յիմանալեացն էր կրսերագոյն, բայց լսելի է զբանս աստուածավայելչաբար, քանզի յաղագս Միածնին խաւսելով՝ քեզ բան ասաց զնա: Զոր աւերինակ՝ է լոյս եւ յետ փոքր-ինչ ասէ կեանս եւ յարութիւն եւ ոչ լոյս լսելով՝ ի զգալիս յայս եւ աչաց տեսանելի ի խոնարհ բերես եւ ոչ կեանս լուեալ զհասարակաց զայս իմանաս, զոր անբանք կան, այսպէս եւ բան լսելով՝ պահեա՛, մի՛ երբէք տկարութեամբ մտացդ ի ներքոյ անկցիս, քննեա՛ զիմաստն նախքան զասացեալս: Նախ եւ առաջին վասն այնորիկ Բան մականուանէ զՈրդի, քանզի պէտք էին ճանաչել զՈրդւոյ անսկզբնութիւն, զի մի գուհակ արիանոսացն արարած գոլ զՆա իմանայցեմք. ասաց Բան, զի որպէս մերս բան, զի ոչ յինքենէ ունի զգոյանալն, եւ ոչ յոչէ՛ զլինելն, /129բ/ եւ ոչ արտաքոյ մտաց զծնունդն, այսպէս եւ ոչ Որդի յինքենէ գոյացեալ կամ յոչէ՛ յառաջ եկեալ, այլ որպէս բանին առ միտս կալեալ զծնունդն, նոյնպէս եւ Որդի՝ առ Հայր: Տե՛ս, որքան միով բանիւ ի ներքս ածելով՝ փակեաց զանեղութեանն Որդւոյ, եւ զանախտ ծննդեանն, եւ զանբաժանութեանն, եւ զանքակութեանն զկարգս:

Երկրորդ, թէ ընդէ՞ր Բան, զի անախտաբար ծնաւ, եւ զի ցուցցէ, թէ ի մտաց յառաջ եկն, եւ պատկեր է Ծնաւորին՝ բովանդակ յինքեան ցուցանելով զԾնաւորն՝ ոչինչ անգուստ ի

110 Յովհաննէս Երզնկացի, էջ 191-192:

բաց բաժանեալ եւ կատարեալ գոյանալով ըստ ինքեան, քանզի որպէս մեր բանս զբոլոր մեր բան զբոլոր մեր կերպարանէ զմիտան, զի զոր ի սրտին իմանամք, զայնոսիկ բանիւն յառաջ բերեմք: Եւ է ի սրտին իմաստից պատկեր խաւսեցեալն, վասն զի յաւելորդաց սրտին բանն բերեալ լինի եւ է ի սիրտս մեր իբրեւ աղբիւր ինչ, իսկ յառաջբերեալ բանն իբրեւ վտակ ինչ յաղբերէ յայնմանէ հոսեալ, եւ այն ի բաց հոսեալ որքան նախաբար բերեալն է, եւ որպիսի ծածկեալն է, նոյնպիսի եւ երեւալն:

Երրորդ՝ Բան ասաց, զի զանախտ |130ա| քեզ զծնունդն ի Հաւրէ մերձ կացուցէ, եւ զկատարեալ գոլն քեզ զՈրդւոյն աստուածաբանեցէ, եւ զանժամանակ զՈրդւոյ զմիաւորութիւնն առ Հայր ի ձեռն աշտոյցիկ ցուցցէ, քանզի եւ մեր բան մտաց է ծնունդ անախտաբար ծնեալ, զի եւ ո՛չ հատանի, ո՛չ բաժանի եւ ո՛չ ցնդի, այլ մնալով բան միտք յիւրում գոյացութեանն՝ բովանդակէ զբանն եւ կատարեալ ի ներքոյ կացուցանելով եւ յառաջեկեալ բանս զամենայն զծնաւդէն զիմաստն յինքեան պարունակէ:

Չորրորդ՝ այլ իմն արժանավայելուչ ցուցակութիւն առաստութիւն բանին արտահայտէ, զի որպէս ներտրամադրեալն բան, ծնանելով ի մտաց, զանխուլ եւ ծածուկ գոլով ի խոհեցաւդականին ի ձեռն ձայնի բացակատարման զգալի լինի լսելեաց եւ առ լսաւդն լինի անորիշ եւ անբաժ մնայ առ միտան. ոչ մասամբ ի ձեռն ձայնի հատմամբ որոշեալ, այլ ի ներլսաւդսն եւ ի վիպասանաւդսն համապատիւ կալեալ զբնութիւնն, այսպէս եւ Բանն Աստուած՝ Միածինն Որդի, եկաւորեալ առ մեզ մարմնով յերկիր, զոր

արար եւ ուր էր միշտ, եւ նախախնամէր եւ մնացեալ աննուազ |130բ| եւ անկապուտ ի հայրական ծոցոյ, ուստի էջն՝ ոչ բաժանելով ըստ աստուածային անպարագրելի բնութեանն, այլ որպէս կատարեալ առ Հաւր, կատարեալ առ մեզ սակս անհատ բնութեանն:

Հինգերորդ՝ վասն աշտորիկ Բան յորջորջի, զի «Հրեշտակ մեծի խորհրդոյ» կոչեցաւ Որդի՝ ըստ Եսայ[ե]այ (Ես. Թ 6) սակս ի Հաւրէ առ մեզ բանն տարբերութեան, զի որպէս ի ձեռն բանի զմիտս ճանաչեմք, եւ զախորժակս մտացն բանիւն նկատեմք, նոյնպէս եւ զՀայր Որդւով ծանեաք եւ զկամս Նորա. լուա՛ր Բան, ծանեա՛ր եւ զՀաւր մեծութիւն ի Տեառնէ իսկ վկայեալ. «Որ ետես զԻս, ետես զՀայր» (Յովհ. ԺԴ. 9), եւ «Ես եւ Հայր մի եմք» (Յովհ. Ժ. 30):

Զերրորդ՝ Բան աւրհնաբանի Աստուած առ ի սրբազանիցն ասացելոց ոչ միայն զի եւ բանի, եւ մտաց, եւ իմաստութեան է բաշխաւդ, այլ զի եւ զամենայնի պատճառս ի յինքեան միատեսակապէս է առեալ, եւ զի ընդ ամենեսեան տարեալ լինի թափանցիկ լինել՝ որպէս ասացեալքն ասեն, մինչ եւ յամենեցունց վաղճանն եւ նախքան զայսոսիկ, զի եւ քան զամենայն պարզութիւն է գերա|131ա|պարզեալ աստուածայինն բան, եւ քան զամենայն գերագոյն ըստ գերազանցութեանն է արձակեալ. այս բան է պարզ եւ արդար եւ գոլով ճշմարտութիւն, առ որ որպէս մաքուր եւ անմոլար գիտութիւն ամենեցունց աստուածային հաւատ է. յարատեւաւդ սէրտութիւն հաւատացելոց, որ սէրտ են զնոսա ճշմարտութեամբ:

Է.երրորդ՝ վասն աշտորիկ Բան

ասի Որդին Աստուծոյ Միածին, վասն զի զամենայն անբանութիւնս մեր երարձ եւ արար մեզ բանաւորս, որ էրն ի սկզբանէ առ Հաւր եւ երեւեցաւ մեզ եւ ոչ եղեւ որպէս ոմանք ի հերձուածաւդացն ցնորեցան ասել, թէ՝ «էր երբեմն յորժամ ոչ էր Որդի»:

Արդ, եթէ Բան է Հաւր ի սկզբանէ Որդին Միածին, եւ ասիցէ ոք, թէ՝ «էր երբեմն յորժամ ոչ էր Որդի», ապա անբան ասիցէ զՀայր սկիզբն եւ առանց զաւրութեան եւ իմաստութեան, քանզի «Քրիստոս Աստուծոյ զաւրութիւն եւ Աստուծոյ իմաստութիւն» (Հռոմ. Ա. 24):

Ը. երորդ՝ թէ Բան կոչի Միածինն, զի ցուցցէ յայլմէ առ այլ եղեալ, որպէս բնաւորեալ է Բանն յերիս տարորոշիլ եւ առ ո՞վ եւ վասն որո՞յ, յորմէ իբր թէ յԱստուծոյ Հաւր է ըստ բնութեան ծնունդ, իսկ առ ո՞վ, զի խոնարհեցաւ առ մերս բնութիւն եւ վասն որոյ յաղագս մերոյ փրկութեան:

Թ. երորդ՝ սորին վասն Բան, քանզի ապաքս ունի առ Հայր, որպէս առ միսս բան ոչ միայն յաղագս անախտ ծննդեանն, այլեւ զմիաւորութիւնն /131թ/ եւ զպատմաւականն թուի, թէ ասիցէ ոք եւ իբրեւ սահման առ սահմանեալն եւ¹¹¹ Հաւր բնութեանն, վասն զի ծնունդ է ամենայն ծնաւղի լռեալ բան, ապա թէ յաղագս դոյացուցանելոյն զեսս. ասիցէ ոք եւ ոչ վրիպեցէ, վասն զի զի՞նչ է, որ առանց բանի հաստեցաւ: Իսկ յաւելուած յաւելին, զի ոչ ասաց. «Ի սկզբանէ էր Բան», այլ՝ «Բանն», զի ցուցցէ ոչ յաճախ բանից որոշեալ բան, այլ Բանն զանձնաւորութիւնն նշանակեալ եւ զէակցութիւնն ընդունաւղին

զԲանն, եւ ոչ որպէս դոյզն-ինչ բան նախքան խաւսելն լռեալ եւ յետ խաւսելոյն դադարեալ, այլ մշտնջենաւոր կացեալ, մնացեալ յաստուածական էութեանն փառս. այսոքիկ թէ վասն է՞ր ասացաւ Բան:

Եկեսցուք եւ ի Ե. երորդ զլուխն եւ տեսցուք, թէ ընդէ՞ր արդեաւք ոչ ասաց Որդի կամ Յիսուս Քրիստոս, վասն այնորիկ յապաղումն առնէ Որդւոյ առասութեան, զի հարկ լինէր տկարա/132ա/դուռնիցն մտաց ի բազում ալէկոծութիւնս ծփիլ, թէ զիս՞րդ արդեաւք ծնաւ՝ յետ ժամանակի՞, թէ՞ նախքան զժամանակ, առանց կարեաց, եթէ՞ կարեաւք. առանց բաժանման է, թէ՞ բաժանմամբ, վասն այնորիկ զբանն զնէ զաղափար, որպէս յառաջագոյն ասացաք, զի ցու[ց]ցէ զանեղութեանն եւ զանախտութեան[ն] եւ զանբաժանութեանն զաւրինակ: Եւ Յիսուս Քրիստոս վասն այնորիկ ոչ ասացաւ, վասն զի այսոքիկ տնաւրինական կարգացն են կոչմունք եւ ոչ յատուկ աստուածային էութեանն, զի զՅիսուսն զփրկութեան ունի նշանակութիւն, զի եւ ի փրկելն զմեզ մարմնականաւքս յայտնի լինիցի փրկիչդ անուն: Զի որպէս Ովսէ Յիսուս անուանեցաւ յաւրինակ Փրկիչին՝ փրկելով զԻսրայէլ ի ձեռաց Ամաղեկայ եւ քանանացւոցն, բայց նա միայն գտունն Յակոբայ փրկեաց, եւ մարմնաւոր իսկ էր փրկութիւնն եւ ազատութիւնն: Իսկ Փրկիչն Յիսուս զբոլոր սեռս մարդկան փրկեաց յիմանալին Ամաղեկայ ի մեղաց եւ ի մահուանէ, որպէս ասաց հրեշտակն. «Նա փրկեաց զժողովուրդ ի մեղաց իւրեանց» (Մատթ. Ա. 21), եւ «Ծնաւ ձեզ այսաւր Փրկիչ» (Ղուկ. Բ. 11): /132թ/ Վասն այնորիկ զՅիսուս

111 Ձեռագրում մնկ փող գրված է:

անունն ոչ առնուել ի կիր, զի այսոքիկ, որպէս ասացաք, մարմնաւոր են կոչմունք, եւ փրկելն զմեզ զմարմնականաւքս յայտնի լինիցի փրկիչդ անուն: Իսկ Քրիստոսն անուն վասն այնորիկ յապաղէ, զի Քրիստոսս ո՛չ սոսկ աստուածութեանն է անուն եւ ո՛չ լոկ մար[գ]կութեան, այլ միաւորութեանն՝ առելոյ մարդկութեանն եւ աւծելոյ աստուածութեամբն՝ ըստ Դաւթի եւ Պետրոսի, զի «Քրիստոս» ըստ եբրայականին է ձայն, ի մերս թարգմանե[ա]լ «Աւծեալ» անուանի: Յայնժամ կոչեսցի Քրիստոսդ անուն, յորժամ ըստ մարդկային կարեաց ընդունի զաւծմանն զաւրուութիւն, որ վասն յանցանացն Ագամայ Հեռացաւ ի մէնջ: Այսպէս զորդիութեանն անուն ի դէպ ժամանակի աւանդէ առաքելոցն՝ յաշակերտելն զազինս ամենայն. «Մկրտեցէ՛ք զնոսս յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն» (Մատթ. ԻԸ. 19): Տեսե՞ր որպէս յիւրաքանչիւր տեղիս ըստ պատշաճութեանն վերայկոչին անուանքն եւ Համապատուութիւն Որդւոյ ընդ Հաւր եւ Սուրբ Հոգւոյն լծակցեսցի, յորժամ ի ծայրագոյն վարդապետութիւն Համբարձեալ ձգէ զաշակերտացն սրբոց դասս: Իսկ ի վերայ այսր ամենայնի [133ա] անճառ են յեղականացս խորք բանիցս ասացելոց, զի Հոգւոյն Աստուծոյ եւ ոչ եթէ ի մարդկան մտաց են ասացեալքս, զի եթէ խորհուրդք մեր անգիտելի են միմեանց, որչա՛փ եւս խորհուրդն Աստուծոյ եւ Բան, որպէս վկայէ առաքեալ, թէ՛ «Ոչ ոք գիտէ զխորհուրդ Հոգւոյն, թէ ոչ Ինքն յայտնեսցէ» (Ա. Կորնթ. Բ. 11), եւ այլուր՝ «Անքննելի եւ անզննելի, ասէ, զգատաստանս եւ զճանապարհս Նորա» (Հռոմ. ԺԱ. 33), քանզի ո՛չ երկնի բարձրութիւն եւ ո՛չ

երկրի եւ ծովու լայնութիւն, նաեւ ո՛չ անդնդոց խորութիւն տանել կարեն զիմաստ Հոգւոյն՝ ըստ իմաստնոյն բանի (Հմմտ. Յոր ԻԸ. 12-18), սակայն մեր որպէս կաթիլ ի ծովէ եւ շիթս յանձրեւէ աւրնկալեալ ի Հոգւոյն՝ առ ի զովացուցանել զպապքումն ծարաւոյ սրտից մերոց, քանզի այժմ գիտելի է մեզ զբանս մարմնաւորապէս աւրինակաւք, այլ յայլմէ երեւմանցն ժողովելոցն ի մի իմն ճշմարտութեանն կերպարանս, բայց փոքր մի յետոյ բոլորովին հոգեւորապէս, յորժամ եւ զբանս զայսոսիկ գիտասցուք մաքրագոյնս եւ յայտնաբոյնս ի նոյն Ինքն ի Բանն եւ յԱստուած ի Տէր մեր Յիսուս Քրիստոս ի ճշմարիտ ապրեցելոցն տաւն ցնծութիւն, ընդ որում [133բ] փառք եւ պաշտաւն Հաւր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն այժմ եւ միշտ եւ յաւիտեան: Ե[ւ] այժմ բանիս աւարտումն արարեալ, զձեռս եւ զմիտս ի վեր կարկառեալ՝ աւրհնութիւն Հանդերձ գովասանական երգով ամենայն Ամենատեառն մատուցուք, որ նստի բարձունս բարձանց եւ յերկինս երկնից եւ ի սուրբն սրբոց, որ անդնէ քան զիմանալի գաւառն Հրեղինաց, ուր միայնակ Սուրբ Երրորդութիւնն շրջի՝ զամենայն արարածս արտաքոյ թողեալ առաջին վարագուրաւն զիմանալիսն յինքենէ, եւ երկրորդաւս զմեզ ի նոցանէ, զոր եւ աստուածաբանեալ փառաւորեսցուք Աստուած Բան փառատրութեամբ աւրհնել զՆա, յերիս երեւեալ երեսս եւ անձինս, թէ եւ դէմս եւ գոյութիւնս Հաճոյ իցէ ումեք ասել, եւ ի մի միասնականութիւն, եւ յաստուածութիւն, եւ ի գաւրութիւն, եւ մի բնութիւն, եւ ի Համակամութիւն, եւ ի մի թագաւորութիւն, եւ յիմաստութիւն էակցութեամբ եւ իսկու-

թեամբ, եւ ի մի պատիւ փառաւորեալ եւ զուգակցութեամբ երկրպագեալ, անորոշաբար բաժանեալ եւ անխառնապէս միաւորեալ նախքան զյաւիտեանս եւ յառաջ քան զժամանակս, եւ երկցագոյն քան զընթացս մտաց եւ [134ա] բանից եւ զգալութեանց՝ արարիչ գոյով եւ նախախնամիչ բոլորից՝ իմանալեաց եւ զգալեաց:

Հայեցցի եւ ինքն այժմ յիւրական բարիսն եւ իւրական գթութեամբ յիւր արարածս¹¹² եւ բացեալ զաններհելի եւ զողորմած ակն, տեսցէ զկարիս եւ զկարաւտութիւնն աշխարհիս, եւ լցուցէ զպակասութիւնն ամենեցուն յանձախելի ծովէն, եւ յաւգնել մեզ փութացի տկարացեալ բնութեանս, եւ նայեցցի ի գերի անգեալ եւ կործանեալ ազգիս մերոյ ի պէսպէս եւ ի զանազան խորխորատս, միակն՝ Միածին Որդին Աստուծոյ՝ ծագումն եւ ծնունդ Հաւր յառաջ քան զարուսեակն, որ ի լրման աւուրց եղեւ պտուղ կուսութեան եւ Նոր Ագամ՝ յինքն առեալ զբնութիւնս անթերի եւ որ ինչ է ի մարդ, բաց ի մեղաց. մի Որդի եւ մի Քրիստոս ի միում բնութեան, եւ ի մի կամս եւ ի ներգործութեան խոստովանեալ յուղղաբաւան Սուրբ Եկեղեցւոյ, որ եւ խաչիւ արարեալ զմեր փրկութիւնն, եւ թաղմամբ թաւթափել ի մէնջ զապականութիւն մեր, եւ կործանմամբ զժոխոցն ազատեաց զհոգիսն, որ յԱգամայ: Յարե[աւ] աստուածաբար եւ ել ի յերկինս նովիմբ աստուածացեալ մարմնով, որ եւ գալոց է [134բ] նովին մարմնով եւ հայրենի փառաւք, դատաւոր կենդանեաց եւ մեռելոց, եւ հատուցանէ իւրաքանչիւր գործոց անեղբարական յա-

ւիտենիւն, որ եւ նա, որ պատուիրեաց մեզ հայել ի մեզ, հայեցցի եւ տեսցէ Հարբ եւ Հոգւովն զվէրս կաւղին տիգախոցի, եւ հարուածս բեւեացն, յոտս եւ ի ձեռն, եւ այնու եռանդնաշարժ սիրովն հայեցցի ի գինս արեան իւրոյ: Եւ երկնակազմ եւ աշխարհաշէն ձեռամբն բեւեռեսցէ զամենեսեան յերկիւզն իւր եւ ի սէրն եւ ջնջեսցէ զամենեսեան, որ հակառակ կան Սուրբ Եկեղեցւոյ, եւ մաքրեսցէ զամալթ եւ զարտաւար յամենայն երեսաց քրիստոնէից՝ դաւանել ի ճշմարիտ կրաւնից նուիրական համատարած Կաթուղիկէ եւ Առաքելական Եկեղեցի:

Հարսնազգեսցեալ ի զարդ անկողնպտելի անարատ առաքաստի եւ տեղի լայնագոյն, եւ երկայնաձիգ խորագոյն, եւ բարձրագոյն ընդ անչափին Աստուծոյ մեծացեալ եւ բարձրացեալ յանհասական բարձրութիւն, որ է հաւատն համահաւաք՝ տիեզերագրաւ համաշխարհական ամենասփիւռ եւ բոլորից բովանդակաւ, [135ա] որոյ հիմունք հաստահեղուք եւ պաղպաղմունք ական[ա]կուռք եւ մարգարտայեռք ոսկիալիպլք եւ արծաթաձոյլք, որոց ամբոց լերինք մշտնջենաւորք եւ բլուրք յաւիտենականք, յորոց առաջինն եւ նշանաւորն մեկնակն եւ աննմանակն:

Լեառն Աստուծոյ կոչեցեալ եւ լեառն մածեալ, լեառն պարարտ եւ լեառն սուրբ լոյսընկալ, եւ լեառն, որ երկնից գոյ բարձրագոյն ի Դանիելէ տեսեալ, ուստի «Վէմն ծնաւ առանց ձեռին» (Դան. Բ. 45) եւ մեծացեալ կալաւ զամենեսեան, որ նա ինքն է մայրն [է]մանուէլի ամենաբախտն, ամենաւրհնեալն ի կանայս Սրբուհի Աստուածածին Մարիամ՝ երանելին յազգս եւ յազիւնս ամենայն, զարմա-

112 Բնագրոս՝ արարարածս:

ցուցիչն խորոց եւ բարձանց: Յետ որոյ եւ ի նորին լուսանշոյլ խորհրդոյն փառաւորեալքն եւ յարայշար շարայարեալքն սուրբ եւ խաւսուն քարինքն՝ կարկէհանքն եւ զմրխտայքն, կայծն եւ շափիղայն կոչեցալքն ի խորհրդոց դրոց, «մեծն ի ծնունդս կանանց» (Ղուկ. է. 28), հրեշտակն երկրաւոր եւ մարդն երկնաւոր Յովաննէս, կարապետն եւ անդրանիկն մարտիրոսաց, իրիցագոյն [135բ] պսակաւորն գունազեղեալ արեամբ Անմահին Նախայվկայն Ստեփաննոս եւ երկոյտասան ճառագայթն ընդ իմանալի արեգական փայլատակեալ, որք ականատեսք եւ սպասաւորք եղեն Բանին մարմնացելոյ, եւ առին երանութիւն յաչս եւ յալանջս իրաւապէս եւ ստուգաբար¹¹³ երկոյտասան առաքեալքն եւ ՀԲ. ցումունք, լուսաբորբոք եւ որդիքն լուսոյ եւ տուրնջեան, եւ աղբիւրքն Իսրայէլի. անսահման ծովուն ակունքն, ծաւալք ծարաւեաց եւ ոռոգմունք տինգերաց, մարգարէիցն հանգէսք եւ նախալոյսացն հոյլք:

Որք եւ գովեցան իսկ, գգ[ու]եցան ի Հոգւոյն Սրբոյ եւ եղան Հաստայկաւոյց քարինք, եւ վէմք կենդանիք, եւ բարեբեղուն պահանք Սուրբ Եկեղեցւոյ, որք եւ խճեալք եւ կրամածք շաղախեալ սոսկալի ոսկերաւք եւ վարդագոյն արեամբ, մարտիրոսացն բազմութիւնքն հազարաւորաց եւ բիւրաւորաց բանակաց:

Որք արեամբ հարչարանաւք եւ մահուամբ դառնագունիւք կարծրացուցին եւ անդրդուելի դրանց դժոխտցն արարին զշինուած [136ա] անդամոցն Քրիստոսի գլխոյն ահաւորի, զի մի՛ եղիցի անմէջ փորագարտակ

հիմն ծեփեալ արտաքուստ: Իբրեւ զշինուածն հրէական դիւրաքակ, վաղափուլ, զոր եւ Խնքն Տէրն ամբաստանէ սրբովք մարգարէիւքն: Այլ որպէս աստուածարկու հիման եւ անձեռագործ շինուածի, զոր Տէրն Հաստատեաց եւ ոչ մարդ. «Կացցէ եւ մնացէ զշխոյ ընդ աջմէ Աստուծոյ» (Սաղմ. ԽԴ. 10)՝ մշտնջենաւորեալ անսպառ յաւիտենիւն խաչիւ պսակեալ գլուխն անհամեմատ բարձրութեամբ, անմեկնելի զխաչելն Աստուած ունելով յինքեան, զսիրով սեւեռեալն զքեղազարդ թագաւորեալ, զոր աւրհնեացուք ի փառս փեսայացեալ Բանին աստուածարկու փառաւք փառաւորելով, զի եղիցի սմա պարիսպ¹¹⁴ հրեղէն շուրջանակի եւ ի փառս բնակեացէ ի սմա յաւիտեանս յաւիտենից: Եւ զի հաճեցաւ ընդ սա, աւրհնեացէ, զոր ինչ սորա է, եւ զաղքաստ սորա լցուցէ ամենայն բարութեամբ, զոր եւ աղաչեմք հայել յիւր սէրն առ բնութիւնս եւ յառաջին զաւրաւորսն եւ յայժմու տառապեալքս, զի յամենայն ինքն է, եւ մեք ի մասանց սորա եմք [136բ] եւ են բոլոր համաւրէն քրիստոնեաք, ընկալցի զամենեսեան եւ լուսացէ իբրեւ մայր զմանգունս:

Անժանդ, եւ անաղտ, եւ անխոց, եւ անսպի արասցէ ի ներքոյ եւ արտաքոյ յոգի եւ ի մարմին մաքրեացէ, եւ մի՛ թողցէ բան ծածուկ եւ խորհուրդ անաւրէն ի սրտի մերում եւ մի՛ ի խաւսս եւ ի գործս անաւրէնութիւն յայտնեցի ի վարս մեր, զորս ոչ սրբեացէ խորհրդիւ իւրով եւ քաւիչն արեամբն Քրիստոսի եւ ջրով սրբութեամբ Աւագանաւն, զորս զուտ եւ մաքուր եւ յստակ արասցէ եւ արժանի

113 Բնագրում՝ սգուգարար:

114 Բնագրում՝ պարիսպ:

Հաղորդութեան հացին, որ իջեալ յերկնից բաշխի ի սմա՝ միշտ եւ անծախապէս զառաջինսն բարեխաւս ունելով վերջնոցն, եւ զսուրբ, եւ զարդար, եւ զհարազատն մեր ընդ մեղաւորացս՝ սկսեալ ի մաքուր մայրն Աստուծոյ Մարիամ, ի նա յարելով զառաջին եւ զվերջին բարիսն եւ զբարեխաւսն, որք էինն եւ ենն եւ լինելոցն են, մինչեւ դադարեսցին արարածք ի լինելոյ, զի յաղթեսցեն լոյսքն կոչեցեալք եւ կենդանիք եւ սուրբք, եւ արդարք՝ խաւարին, եւ մահուն, եւ պղծութեան անիրաւութեանն մերում՝ ողորմելով [137ա] թշուառացեալ մարմնակցեաց իւրեանց եւ ազգայնոցս:

Զսուրն սուրբեւզմեծն եւ զհաւարն առեալ ի մաքուր ձեռա իւրեանց զիմանալի զխաչն աստուածընկալ եւ զներկեալն եւ զմիտեալն ահագին արեամբն Աստուծոյ կնքեսցէ զամենեսեան եւ ամենայմերձ մաքրեսցէ, սրբեսցէ եւ պայծառագործեսցէ, փառաւորեսցէ եւ աւրհնեսցէ զաւրհնիչս մեր՝ զհայրս հոգեւորս, զգաստիարակիչն խնամածու բազում աւրինակ հնարիւք ողորական եւ սաստկական բանիւք, հրաժարական եւ մերձաւորիչ բանիւք եւ խաւսիւք ի տուէ եւ ի գիշերի, զորոյ զփոխարէնն բիւրայպատիկ հատուցէ Քրիստոս Աստուած, մինչեւ ցյետին բնիոնն յաւիտեանական եւ յանսպառուած աւուրն:

Նոյն աջն աջաւղակ, եւ բարեբաշխ, եւ շնորհատու հայրական գթութեամբն եւ առատ ողորմութեամբն զյետ Աստուծոյ երախտաւորսն մեր հատուցմամբ վճարեսցէ հոգեւոր, եւ երկնաւոր կենաւքն անվաղճանաւք ի յաղաւթս եւ ի բարեխաւսութիւն ամենայն սիրաւղացն Աստուծոյ եւ բուն բարեկամաց եւ զըստ մարմ-

նոյ ծնաւդսն մեր [137բ] եւ զազգատոհմսն, որք ծնան մեզ եւ սնուցին եւ յուսացան յԱստուած՝ ի ձեռա մեր լինել արժանի բարեաց աստուածայնոց: Եղիցի նոցա ըստ յուսոյ իւրեանց, յամենայնաւ եւ յամենայնտեղձ բարի բնութենէն, թէպէտեւ մեք չեղաք որպէս ախորժէին նոքա, այլ որպէս յուսացանն ի կարաւղ եւ ի կամեցաւ ձեռացն Աստուծոյ հատուցի նոցա, եւ առաւել հարազատք մեր ի Քրիստոս եւ համշխրակ եղբարք, որք տարան զմեզ յամենայն բարուց, եւ վարուց, եւ դնացից, եւ խաւսից անպատշաճից, եւ անզգուշացելոց:

Եղիցի ամենեցուն առհասարակ ներումն եւ անյիշութիւն իւրեանց սխալանացն ի բարերար Տեառնէն եւ ի կատարումն գործոց նոցա ի բարի յաւժարութիւն առաւել քան զառաւել ի փառա Աստուծոյ եւ յաւգուտ Եկեղեցւոյ եւ ի զարգացումն մանկանց Նոր Սիոնի՝ զնալ փառաց ի փառա աւրըստ[աւր]է ընդ երկայն աւուրս եւ զաւրանալ ի զաւրեղ եւ յամենակեցոյց Աջոյն ի հարիւրաւորն պտղաբերութիւն, ի գագաթն կատարման յանգրաւական ուրախութիւնսն, որ կայ եւ պահի սրբոց [138ա] եւ սիրելեաց Աստուծոյ իրաւադատ ատենիւն հատուցեալ. զանտեսն աչաց եւ զանլուրն ականջաց եւ զանիմացն սրտից ի յաւրն եւ յաշխարհն մշտնջենաւոր եւ անեզրական անգրաւապէս¹¹⁵ յաւիտենիւն:

Այն, որ նստի ի քերովքս եւ հայի յանդուլդս, եւ լի են Նովաւ երկինք եւ երկիր՝ ըստ լայնութեան եւ երկայնութեան, ըստ բարձրութեան եւ ըստ խորութեան, այժմ հայեսցի ի

¹¹⁵ Բնագրում՝ անգրաւապէս:

շնորհ աւուրս եւ ի բարեխաւսութիւն սրբոցն, որոց այսաւր է յիշատակ, եւ յաղաթս սրբազան, եւ երկնագումար խմբիս, եւ հանգիսաւոր ժողովոյս, եւ տացէ աշխարհի զանխռով խաղաղութիւն իւրական, դադարեցուցէ զցասումն պատուհասի յանցանաց մերոց, փրկեացէ զիւրաքանչիւր ոք ի վտանգից եւ ի փորձութեանց, զանկեալսն կանկնեացէ, զհիւանդսն բժշկեացէ, զմեղաւորսն քաւեացէ, զգերեալսն ազատեացէ, զմոլորեալսն դարձուցէ, զկապեալսն եւ զբանդարգեալսն արձակեացէ:

Ճանապարհորդաց, որք ի ծովու եւ ի ցամաքի, առաջնորդեացէ եւ յաջողեացէ, զսգաւորս եւ [138բ] զվշտացեալս սփոփեացէ եւ մխիթարեացէ, նեղելոց, եւ տարակուսելոց, եւ պարտապանաց դուռն հանգստեան եւ հնարս փրկութեան տացէ, զտարերս եւ զմասունս երկրի շնորհաւք եւ աւրհնութեամբ լցուցէ զշրջագայութիւն երկնից, զընթացս լուսաւորաց, զսփռումն աւդոյ, զտարածումն ծովու, զհաստատութիւն երկրի, զգնացս գետոց, զբլիւսումն աղբերաց, զանդաստանս եւ զայգիս երկրագործաց եւ զամենայն պտուղս սերմանեաց բուսոց եւ տնկոց շահեկան եւ շահաւոր բարեխառն արացցէ:

Զհայրապետս վիճակեալեալք, զվարդապետս վարժեցեալեալք, զառաջնորդս ուխտականաւք, զիշխանս իշխեցեալաւք, զքահանայս ժողովրդականաւք, շնորհաւք, պարգեւաւք, աւրհնութեամբ լցուցէ, որոց լիցի ամենեցուն արժանացեալք երկնայնոցն պարակցեալք մշտայգուարճ բերկրանաւք եւ անլուելի փառատրութեամբ երգել զերգս յաղթաւղական Ամենայսուրբ Երրորդութեանն՝ Հաւր

եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: [139ա/]

Այսեւհետեւ գլուխ եւ պսակ բանիս արասցուք՝ իբր զթագաւորական կնիք զամէներջանիկ եւ զգերայպատիւ սուրբ վարդապետն, որ է մեր ստացաւորն Աստուծոյ կրկին ստացաւդ, եւ յետ նախախնամաւորն խնամաւդ՝ զանազան եւ բազմաւրինակ հնարիւք ողորձական եւ սաստիկական բանիւք, հրաժարական եւ մերձաւորիչ բանիւք եւ խաւսիւք ի տուէ եւ ի գիշերի, որոյ ոչ գոյ տրիտուր փոխարինի յերեւելեացս լուծականաց, այլ որ յամենայնի կարաւոյն է եւ զաւրաւոր՝ Տէր մեր Յիսուս Քրիստոս հազարապատիկ եւ բիւրայպատիկ հատուցէ, մինչեւ յետին բնիոնն կրկին կենաւք եւ Բ. աշխարհաւք: Բայց մեք զարժանաւորն գոհութիւն հատուցուք, որպէս պատշաճ է վայելաւղաց ի շնորհս ոչ իբրեւ կարաւոր ուրուք բարեբանութեան եւ կամ փառաց, այլ զի մի՛ ապերախտ գտցուք առ երախտաւորն եւ ապայշնորհ՝ առ բազմայպարգեւն:

Եւ արդ, ուստի սկսցուք եւ կամ յորոց ներբողեացուք զքեզ, ո՛վ գլուխ գերապանծ զահոյարան զգաւնութեան արփիաւորեալ լուսով ի[139բ/-մաստից եւ կենդանայխարուկեալ աստուածային կայծակամք անուանակիր եւ շնորհընկալ որդւոյն Ամովսեայ, բարձրաբարբառ քարոզ եւ ճշմարիտ աստուածաբան Որդւոյն Աստուծոյ, քանզի որք արտաքին հանդիսիցն են վիպասանք ի մարմնոյ, եւ որք նորա են, առնուն զնիւթ գովասանութեանն, այսինքն՝ ի քաջայտոհմութենէ զարմի, ի թագաւորազարդ գահից, յիշխանական պատուոց, ի

յաղթութենէ պատերազմաց, ի վարմանակերտ շինուածոց, ի դատաւողական տեսնից, ի յղփութենէ ստացուածոց, ի զաւրութենէ մարմնոյ, ի բարեհասփութենէ հասակի, ի գեղեցկամասնութենէ անդամոց: Քանզի յայտոսիկ քաջայհաճոյքն բարեբաստիկք, եւ ոչ նոյնպիսիքն եղկելիք անուանին, իսկ որք ի ներքուստ զբարեմասնութեանն սովորեցին նկարագրել զկերպարան, այլ իմն ընդդիմակաւք զքաջայհաճոյութենէն ստորագրեն զգեղ, ըստ այնմ, թէ՛ «Ամենայն փառք դատեր թափաւորի ի ներքոյ, ի վերջաւորս ոսկեհուռն վարդարեալ եւ պաճուճեալ» (Սաղմ. ԽԴ. 14-15):

Վասն որոյ եթէ էր ախորժելի ըստ մարմնոյ զքեզ պանծացուցանել յոլովս առ այս, եւ ընդարձակ նիւթ /140ա/ բարերջանկութեան առձեռն պատրաստի շինուած յարմարութեան գովեստի էր գտանել, բայց զիարդ, որ զամենայն միանգամայն զփառս եւ զմեծութիւն աշխարհիս արհամարհեցեր, կղկղանս համարեցար, ի սոցանէ առցուք քեզ պատճառ դրուատի, զոր ոչ միայն արհամարհեցեր, այլեւ ի վերայ աշտանակի համարձակութեան եւ ճշմարտութեանն ելեալ եւ ի լեռուն իմաստութեան բարձրացեալ՝ ձայնես ի լուր ամենեցուն ի բաց դառնալ ի սնոտի կենացս եւ զճշմարիտ կենացն միայն իմաստայտիբել: Այլ զայտոսիկ ի բաց թողլով եւ որում տենչացար եւ զոր ստացար, առցուք նիւթ ներբաւղի, զիմանալին ի քեզ գեղեցկութիւն նկարագրեսցուք բանիւ, քանզի սեռ գիտեմ քեզ զառաքինութիւն, դաւառ՝ զՎերինն Երուսաղէմ, թափաւորութիւն՝ զերկնից արքայութիւնն, իշխանութիւն զախոս ստորայդասել, յաղթութիւն ի վերայ դիւացն եւ նո-

ցին արկածից, զարմանայհաճ շինուած, որ ի հաւատոյ, եւ յուսոյ, եւ ի սիրոյ ձեռակերտի:

Դատաւողական աթոռ զընտանին քո ատեան զընտրաւողութիւն խոհականին, /140բ/ որով աջեացն ընդ ահեկացն լինի բացորոշութիւն, ճոխութիւն, զոր յերկինս գանձես անդրժելի ճճեաց եւ գողոց: Զաւրութիւն, որով զթշնամին կենաց ընկրկես, բարեհասփութիւն հասակի զժամանելն յայր կատարեալ ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի, գեղեցկամասնութիւն զպատկերանալն ի կերպարան սկզբնատպին, յոր եւ հաստատեցարն:

Արդ, աջն աջաւղակ եւ բաւզուկն ամենազաւր եւ լոյսն ճշմարիտ ակրհնեսցէ զաւրհնիչդ մեր, զհա՛յրդ հոգեւոր¹¹⁶:

Որք հեզագոյն շարժամբ ընդ աստիճան առաքինութեանն ի լեռուն իմանալի բարձր տեսութեանն ըստ Մովսէսի ժամանեցին, եւ զհին մարդն որպէս հանդերձ անվայելուչ եւս սգեստ անպիտան ըստ խրատուն Պաւղոսի յանձանց ի բաց մերկացին եւ զչքնաղ եւ զհրաշ/141ա/գեղ լուսայփայլեալ նորոգ պատմուճանն, զոր Տէրն ի լերինն արտայփայլեալ ճառագայթածեւ հրաշիւք յայտնեալ եցոյց երջանիկ առաքելոցն, զնոյն անձամբ արկեալ զարդարեցան մանաւանդ թէ՛ զնոյն ինքն զՔրիստոս հանդերձ պատմուճանաւն առաքինի գործովքն զգեցան, եւ անձրեւաւք յոքնահեղ եւ առատահոս շնորհաւք Հոգւոյն Սրբոյ

116 Ձեռագրում հինգ փող բացակայում է: Հավանաբար այսպեղ Կիրակոս Երզնկացին պիտի շարունակեր իր «Փոգեառ հոր» գովքը, բայց ինչ-որ պարճառով թողել է հետագային եւ ցի ավարտել: Ձեռագրի գրիչն էլ արարագրել է ճառն այնպես, ինչպես որ եղել է իր ձեռքի փակ:

զմայլեալ ճոխացան, եւ զնոյն ինքն զՊատճառն Համայնից գոյից ի սիրտ եւ յոգի ընկալան՝ ըստ Հրամանի կենարարն ձայնի, եթէ՝ «Ոք զպատուիրանս Իմ պահեսցէ, ես եւ Հայր առնա եկեսցուք եւ աւթեւանս առ նմա արասցուք» (Յովհ. ԺԴ. 23), եւ «ես յո՞հ հանգեայց՝ եթէ ոչ ի հեզս եւ ի խոնարհս» (Ես. ԿԶ. 2):

Քանզի տեղի հանգստեան անտանելոյն երկնի եւ երկրի անձինք սրբոց յարդարեալ պատշաճի, որք եղեն հետեւաւղք Նորին Հրամանի

եւ եղեն լոյս աշխարհի եւ քարոզք կենացն Բանի, որոց բանքն կենդանի գոլով յաշխարհի կենդանայբաշխ մարդկանս սեռի նոցին համաքատակից ընպոն¹¹⁷ եւ յարմարէր համարձակել ի գերապայծառ բանիս տեսութիւն, բայց ինձ՝ ծուլիս եւ հեղգացելոյս, որ զարծաթ /141թ/ Տեառն իմոյ, զոր ընկալեալ ստացայ յաղբախտից եւ ի վարչամակ հեշտութեան՝ ծրարեալ թագուցի, ոչինչ ջան եւ փոյթ ի յանձին բերի ի կրկնաշահ քանքարացն ստացումն:

117 Բնագրում՝ նըպոն: